№ 49 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 5

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 5 № 49

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօնական օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թագուհի Մովսիսեան և Մկրտիչ Աւագեան Պետրոսեանները, Աննա Գասպարեանցը խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր անմոռանալի մօր, երկրորդն իր Թանկագին զոքանչի և երրորդը իր սիրելի սկեսր՝

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻ

ցաւալի մահը, որ տեղի ունեցաւ մարտի 3-ի առաւօտեան։ Հոգեհանգիստը կը լինի շաբաթ, մարտի 4-ին, երեկոյեան 6 ժամին, իսկ յուղարկաւորութիւնը կիրակի, մարտի 5-ին, դէպի Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։ Հասցէն՝ Авчальская ул. Батумскій пер., д. Петросянца, № 6.

2—2

Եղիսաբէթ, Գրիգոր և Յովհաննէս Տէր-Աբրահամեանները ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին և ծանօթներին՝ առաջինն իր մօր, երկրորդն իր զոքանչի և երրորդն իր սիրելի տատի՝

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻ

անդառնալի մահը, որ տեղի ունեցաւ մարտի 3-ի առաւօտեան։ Հոգեհանգիստը կը լինի շաբաթ, մարտի 4-ին, ժամը 6-ին երեկոյեան, իսկ յուղարկաւորութիւնը կիրակի, մարտի 15-ին, դէպի Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։

Հասցէն Авчальская ул. Батумскій пер., д. Петросянца № 6.

2—2

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏԻ 5-ԻՆ

Արտիստական Ընկերութեան վերին դահլիճում, ցերեկվայ ժամի 12-ին կայանալու են պ.պ. Իւ. Ֆ. Սեմենօվի եւ Ա. Հ. Քալանթարի

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա) Իւ. Ֆ. Սեմենօվ. «Պետական Դումայի ընտրութիւնները».

I. Կովկասի Սահմ. դեմօկրատ կուսակց. դրութիւնը միւս կուսակցութիւնների շարքում։

II. Անհրաժեշտ է մասնակցել ընտրութիւններին. 1) Պարզելու վերաբերմունքը դէպի աւելի աջակողմեան կուսակցութիւնները. 2) Պարզելու կառավարութեան՝ դէպի Պետական Դուման ունեցած վերաբերմունքը։

III. Ի՞նչ պէտք է անեն Սահմանադիր-ռամկավար ներկայացուցիչները Պետական Դումայում։

IV. Կովկասի ինքնավարութեան հարցը Պետական Դումայի համար ընտրված Թեկնածուների ծրագրում։

Բ) Ա. Քալանթար. «Ագրարային խնդիրներ».

I. Հողային բարենորոգման խնդիրներ.

II. Գիւղատնտեսական արդիւնաբերութեան ձևերը՝ շաղկապված մեքենաներ և առհասարակ տեխնիկական բարելաւութիւն մտցնելու հարցի հետ։

III. Հողային համայնք. նրա կենսունակութեան պատճառը. կամ արդեօք հող համայնացրած աշխատանքներ մտցնելու համար. կօօպերատիւ փորձեր. արտելներ, ընկերութիւններ։

IV. Հողային կարիքները բաւարարեցնելու միջոցները, Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ծրագրի համաձայն.

V. Երկրագործ ազգաբնակութեան արդիւնաբերական ոյժերը զարգացնելու միջոցները։

ՄՈՒՏՔ 20 ԿՈՊ.

2—2

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը սրանով հաղորդում է ի գիտութիւն ընդհանուրի, որ համաձայն Նորին Կայսերական Կովկասի Փոխարքայի կարգադրութեան՝ ընտրութիւններին մասնակցելու համար ցանկացողները պէտք է յայտարարութիւն տան մինչև սոյն 1906 Թ-ի մարտի 24-ը (24 հաշւում է)։

Յայտարարութիւնների ընդունելութիւնը կատարվում է քաղաքային վարչութեան մէջ ամենայն օր, ցերեկվայ ժամի 11-ից մինչև ժամի 2-ը, առանց բացառութեան և տօն օրերը։ Ստատիստիքական բիւրօյում տրվում են հարկաւոր տեղեկութիւններ և բացատրութիւններ Պետական Դումայի ընտրութիւնների վերաբերեալ։ Մի և նոյն ժամանակ այնտեղ էլ ընտրողները կարող են ձրի ստանալ տպագրված Թերթիկներ, յայտարարութիւններ, լիազօրութիւններ հաւատարմաթղթեր տալու համար և այլն։

Յայտարարութիւններ ընդունվում են ինչպէս նրանցից, որոնք մի տարուց ոչ պակաս Թիֆլիս քաղաքի մէջ առանձին բնակարան ունեն իրանց անունով, նոյնպէս և առհասարակ այն բոլոր ընտրողներից, որոնք հաւատացած չեն, որ իրանց կը մտցնեն ընտրողական ցուցակների մէջ.

Ընտրութիւններին մասնակցելու համար ընտրողական իրաւունքների ապացոյց կարող են ծառայել բնակարան վարձելու պայմանագիրները կամ թէ ոստիկանութեան տուած վկայութիւնը դրա մասին, բնակարանավարձի ստացագրերը, անցագրերը, որ կարող են ապացոյց լինել քաղաքում երկար ժամանակ ապրելու համար, իշխանութեան տուած վկայագրերը կամ փաստաթղթերը՝ ստացած ռոճիկների կենսաթոշակների մասին և այլն։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարկային գրքերի մէջ մի քանի կալուածքներ իրանց ներկայ իսկական տէրերի անունով չեն յիշվում կամ թէ գրված են մեռնող սեփականատէրերի ժառանգների անունով, սակայն առանց որոշ յիշելու նրանց անունները, ուստի այդպիսիների տէրերը, սեփականութեան ցէնզով ընտրողների ցուցակագրութիւնը լրիւ կազմելու համար, հրաւիրվում են ներկայացնել քաղաքային վարչութեանը կալուածքն իրանց ձեռքն անցնելու մասին հարկաւոր հաստատութեան վկայագրերը։

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԷՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ

1) «Որբիկների արցունքները»	30 կ.
2) «Երկու պահլուան», (Սասունի հիմնադիրները)	25 կ.
3) «Պոտիկ Մհեր»	25 կ.
4) «Սասունցի Դաւիթ», I հ. 40 կ. II հ. 40 կ. նոյնը մի գրքում.	80 կ.
5) «Զգացմունք»	40 կ.
6) «Հենրիխ Պեստալոցցի» (մանկավարժական).	30 կ.

Այս գրքերի վաճառման արդիւնքի 20% յատկացվելու է դժբաղդացած կողէնցիների օգտին։ Դիմել կենտրոնական, Գուտտէնբէրգի, Թառայեան և Զաքարեան գրավաճառներին, իսկ հեղինակին դիմողները կստանան 30% զիջ, կուղարկվի կանխիկ, նաև փոստով վճարով։ Հասցէն՝ Шулаверъ, Григорію Баласанянцъ. (առ.) 1—10

Պատիւ ունիմ յայտնել յարգելի հասարակութեան, որ այս տարվայ մարտի 1-ից քաղաքի կենտրոնում, Վելեամինովսկի փողոցում, Իսցրաշևի կանդիտէրսկոյին կից բացված է մաքուր և մատչելի

ՃԱՇԱՐԱՆ

„ԱՆԱՏՕԼԻԱ"

Ամսական ճաշողներին տրվում են աբօնիմէնտներ։ Աշակերտներին և գրականագէտներին առանձին զիջում։

Յարգանքով Գասպար Տէր-Յովհաննիսեան

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ I-ին քաղաքամասում, Մեծ և Փոքր Սուրբէրնայա փողոցների անկիւնում, յատուկ շինված նոր շինութեան մէջ, ենթադրվում է բաց անել Ն. Ե. Զուբալովի նուիրաբերած դրամագլխով

«ՉՔԱՒՈՐՆԵՐԻ ՏՈՒՆ»

իբրև ապաստարան աղքատ քրիստոնեաների, արական սեռից, զուրկ իրանց ապրուստը ձեռք բերելու ընդունակութիւնից, երեսուն մահճակալով. տասնական մահճակալ հետևեալ դաւանութիւնների անձանց համար—ուղղափառ, հռոմէական-կաթօլիկ և հայ-լուսաւորչական։ «Չքաւորների տունը» մտնել ցանկացողները դիմում են խնդիրներով Թիֆլիսի քաղաքային վարչութեան, ներկայացնելով դօկումենտներ իրանց անձնաւորութեան, դաւանութեան, աղքատութեան մասին։ Չքաւորների ընդունելութեան մասին եղած խնդիրները կընդունվեն միայն մինչև 1906 Թ-ի ապրիլի 1-ը։ (կ) 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական յանձնաժողովներ. Վերջին տեղեկութիւններ. Նոր ձեւի Թալան. Ոչ մի զոհ. Դէպքերը Վրաստանում. Հայ-Թուրքական համագումարը. Տեղեկատու Զանգեզուրի. Ցաւալի դրութիւնը։ Բաց նամակ Նոր-Նախիջևանի Թեմական դպրոցի վարչութեան, Նամակ Գորիսից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— Անդրկովկասեան քուչուրները։

ՏԵՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Հայ-Թուրքական խորհրդակցութեան նիստերը վերջացան։

Մենք առիթներ կունենանք խօսելու նրա դրական և բացասական կողմերի վրա։ Այսօր մենք մտադիր ենք կանգ առնել մի որոշման վրա, որ վերաբերում է տեղական յանձնաժողովներ կազմելուն։

Խորհրդակցութեան կարծիքով պէտք է նահանգներում և գաւառներում վարչական կենտրոնական իշխանութիւնների նախագահութեամբ կազմվեն յատուկ յանձնաժողովներ, որոնք և քննեն տեղական այն բոլոր հարցերը, որոնք այս ու այն կերպ շօշափում են հայ-Թուրքական յարաբերութիւնների հետ կապված խնդիրները։

Որքան ձեռնհաս կը լինեն այդ յանձնաժողովները օգտաւէտ և նպատակայարմար գործ կատարելու, այդ ցոյց կը տայ մեզ մեր մօտակայ ապագան։ Բայց մենք կարող ենք նախատեսել, թէ ինչ պայմաններ կարող են նպաստաւոր կամ աննպաստ ազդեցութիւն ունենալ այդ գործունէութեան վրա։

Եթէ վարչական հաստատութիւնները անկեղծ և անշեղ կերպով վճռել են դիմել ամենաեռանդուն միջոցների կանգնեցնելու հայ-Թուրքական ընդհարումները, եթէ նրանք որոշել են անաչառ կերպով արմատախիլ անելու աւազակութեան, աւարառութեան և աւերումների չարիքները, այն ժամանակ կարելի է յոյս ունենալ, որ յանձնաժողովները հրաւիրված կը լինեն մի իրական գործի, այլ ոչ կատակերգութեան, որոնց նմանները շատ ենք տեսել վերջին ժամանակներում։

Հազիւ հազ ազգաբնակութիւնը տեսաւ փոքր ի շատէ անաչառ և աչալուրջ վերաբերմունք գեներալ Գօլօշչապօվի և գնդապետ Լէվիցկու կողմից, նա արդէն շտապում է այդ մասին աղաղակելու, ներելով այն մասնակի Թերութիւնները, որ ունեն այդ վարչական անձերը։

Այն մարդիկ, որոնք մեղադրում են ժողովրդին, թէ նա անտեղի և յամառ կերպով դժգոհ է վարչական անձերից, կարող է համոզվել, որ ամենևին այդպէս չէ իրերի բնաւորութիւնը։ Ազգաբնակութիւնը յոգնեց տեսնելով վարչական անձերի երկար շարքեր, որոնք գալիս էին բարի խոստումներով, բայց յետոյ առաջ էին բերում միայն հիասթափութիւն։

Հարցրէք ժողովրդին և նա կը շարէ ձեր առաջ իր հիասթափութիւնների մի սարսափելի տեսարան։ Եւ հէնց որ նա տեսնում է մի փոքր ի շատէ բարեխիղճ վերաբերմունք, շտապում է իր զարմանքը յայտնել և նոյն իսկ շատ անգամ չէ հաւատում իր աչքերին, և երկիւղ է կրում, որ վաղը դարձեալ ամեն բան պէտք է փոխվի դէպի վատը և նորից առաջ գայ հիասթափութիւնը։

Եթէ, յիրաւի, տեղական վարչական մարմինները ձեռնարկեն խաղաղութեան գործին առանց տատանումների, առանց մասնաւոր նկատումների և հաշիւների, այն ժամանակ նրանք կարող կը լինեն գրաւել յանձնաժողովների մէջ հասարակական գործողներին, որոնք անկեղծ և բարեխիղճ կերպով կը տան իրանց ցուցմունքները և կաջակցեն խաղաղութեան և բարեկարգութեան գործին գաւառներում, իսկ եթէ հակառակը կը լինի, անկասկած, բոլոր գործը կը քանդվի, որովհետև բարեխիղճ մարդիկ չեն մնայ այդ յանձնաժողովներում և կը հեռանան այնտեղից, չը ցանկանալով սխալ դերի մէջ լինել և խաբել ժողովրդին։

Վերջին տարիների խախուտ և անբարեխիղճ վարչական գործավարութիւնը, լինելով արդիւնք հին ռէժիմի Թելադրութիւնների, ոչ միայն քայքայեց և անուանարկեց եղածը, այլ և վարկաբեկ արեց իշխանութեան տեղական օրգանները ազգաբնակութեան աչքում։ Եւ այժմ ժամանակ է հարկաւոր և հաստատ ապացոյցներ են անհրաժեշտ ազգաբնակութեան համար, որ անցեալը բոլորովին անցել է, որ այժմ սկսվում է բարեխիղճ և ազնիւ գործավարութիւն, անաչառ վերաբերմունք դէպի մարդիկ և գերիշխում է լայն և ընդարձակ պետական հայեցակէտը նեղ բիւրօկրատական դիտումների վրա։

Տեղական յանձնաժողովների գործունէութեան արդիւնաւորութեան համար կարևոր է այդ հիմնական պայմանը։ Այդ յանձնաժողովները, ինքն ըստ ինքեան, իրաւազուրկ փոքրիկ մարմիններ են, որոնք միայն ժամանակաւոր նշանակութիւն ունենան, ուստի և կարօտ են կատարեալ աջակցութեան վարչութեան կողմից, որպէսզի դրական արդիւնքներ առաջացնեն կեանքի մէջ։

Այլապէս նրանք կը դառնան բոլորովին ապարդիւն բաներ, որոնք ոչ միայն կը մատնվեն կատարեալ անաջողութեան, այլ և աւելի ևս խոր կերպով կը հաստատեն կասկած դէպի վարչական բարեմտութիւնը։

Վստահութեան քուէն, որ պէտք է տայ ազգաբնակութիւնը, կախված է վարչութիւնից—իրանից։ Եւ ազգաբնակութիւնը սպասում է, որ վերջապէս օրը ցնդեն մեքենայութիւնները և անգործութիւնը և նրանց տեղ հաստատվեն կարգ ու բարեխիղճ հոգատարութիւն երկրի և նրա ազգաբնակութեան համար, առանց կրօնի և ազգութեան խտրութիւնների։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաղանիս, Ղազախի գաւառ, մարտի 1-ին

Բ. մասի պրիստաւ պ. Եփրեմօվը մեր գիւղում եղած ժամանակ յայտնեց ի գիտութիւն ժողովրդի, որ եթէ Բաղանիս այրումներից եկող լինեն, կամ դուք բռնեցէք և ինձ յանձնեցէք, կամ յայտնեցէք։ Մեր հայ գիւղերը նրանք չեն գալիս, մի քանի անգամ եկել են իրանց «ղըշ-տալը» և վերադարձել. մէկ անգամ էլ վերադարձին այրումներից չորս հոգի մտնում են Փարաքլու Թուրք գիւղի գոմերը՝ ոչխար գողանալու դիտաւորութեամբ. գոմի մէջը լինում են երկու փոքրահասակ հովիւ եղբայրներ. սրանք նկատելով անկոչ հիւրերի չար դիտաւորութիւնը, իրանց ուժի չափ դիմադրութիւն են ցոյց տալիս, բայց երկուսն էլ ծանր վիրաւորվում են. չարագործները անյայտանում են։ Բարեբախտաբար երկու եղբայրներն էլ ճանաչում են, որ գողերը այրումներ են և անունները էլ տալիս են. Թուրքերը դեռ չեն պատժված։ Եթէ գողերը ճանաչված չը լինէին, ինչ կը լինէր Թուրք գիւղերին կից հայերի դրութիւնը. այն սարսափներին կենթարկվէին, ինչին ենթարկվեց Կողբ գիւղը։ Կողբից վերցրին 3000 ր. տուգանք, բանտարկեցին Աւետիք Ազարեանցին, ժամանակաւոր, մինչև քննութիւն կատարելը, որովհետև վկաները նախնական քննութեան ժամանակ ասել են թէ իրանք տեսել և ճանաչել են և ատամն էլ կոտրած է եղել, բայց այժմ ոչ միայն ատամն է կոտրած, այլ և յիշեալ Աւետիքը երեք ամսից աւելի է, որ Շամշատումը անտառապահ է։ Պ. Լէվիցկին ասել է, որ եթէ բանտարկեալը արդարանայ, 3000 ր. տուգանքն էլ կը վերադարձնեն։

Բանտարկել են քասամանցի Իսրաֆիլ բէգին և Ալաբէգին, որոնք, ինչպէս ասում են, խռովութեան գլխաւոր հեղինակներն են. բանտարկել են Քարվանսարայի Կոմիտաս ք. Սիմէօնեանցին և ուզունթալացի Յովհաննէս Սարիբէգեանցին. շարունակվում է բանտարկութիւնը։ Գնդապետ պ. Լէվիցկու ձեռք առած խիստ միջոցները յոյս են տալիս, որ խաղաղութիւնը մշտական լինի։

Հայր Ալբեսեանցին գալիս ասում են, թէ Բաշքենդ պաշարել են, նա էլ առանց ստուգելու հեռագրում է Թիֆլիս, բայց գիւղը պաշարված չէ լինում. հիմա այդ սուտ հեռագրի համար տէր-հօրը ենթարկել են, ինչպէս Ղազախի եկողը պատմեց, 500 ր. տուգանքի կամ 3 ամիս բանտարկութեան։

Հաշտարար միջնորդ իշխան Ծաւճաւաձէն, շրջելով վնասված գիւղերը, ցուցակագրում է վնասները։

Գիւղերում խօսակցութեան գլխաւոր առարկան կազմում է աւագ և կրտսեր անտառապահների նորից պաշտօնի կոչվելը. հայ-Թուրքական ընդհարումներից առաջ, անտառապահները մեծամասնութեամբ Թուրքեր էին. աւագներն էին Աբբաս և Մուսա Փօլադօվները. սրանց մասին վերջերս շատ գրեցին. ես կաւելացնեմ միայն այսքանը, որ իսկական անտառապետները սրանք էին, որոնք աւելի էին օգտվում քան արքունի գանձարանը. տաճկական կատարեալ փաշաներ էին... Ղազախի աւերումից յետոյ Թուրք անտառապահները գնացին իրանց տները՝ տանելով հետներն արքունական հրացանները. հայ գիւղերի վրա յարձակումների ժամանակ շատերին ճանաչել են, մի քանիսն էլ վիրաւոր են։ Սրանց բացակայութեան պատճառով Քարվանսարայի անտառապետը, որին էր յանձնված և Աղստաֆայի անտառապետութիւնը, նշանակեց հայերի։ Այժմ երբ խաղաղութիւն է, Թուրքերը նորից կամենում են անտառապահ լինել հայ գիւղերում, բայց եթէ սրանք հայ գիւղերը գան, մեր դրութիւնը անտանելի կը դառնայ. ահա թէ ինչու պ. Լէվիցկու կարգադրութեամբ, եթէ մէկ գիւղի սահմանների մօտ սպանվի մի մարդ, այդ գիւղը պիտի ենթարկվի 3000 ր. տուգանքի, գիւղը պիտի ռմբակոծվի, յանցաւորին էլ՝ առանձին պատիժ։ Ի՞նչպէս մենք պահենք Թուրք անտառապահին, ամեն օր նա անտառ է գնում, կարող են նրան անտառում սպանել թէ այլ գիւղի Թուրքերը և թէ հայերը, բայց պատասխանողը այն գիւղը պիտի լինի, որտեղ նշանակված է. այս պատճառով գիւղացիները միաձայն խնդրեցին անտառապետի օգնականին, որ դիմէ ուր հարկն է, առ այժմ Թուրքեր չը նշանակեն, մինչև մի քանի ամիս։

Ապրելը շատ դժուարացել է։

Մելքիսեդէկ քահանայ

Երևան, 1 մարտի

Մեր նախորդ Թղթակցութեան մէջ մեր ընթերցողներին խոստացել էինք տեղեկութիւն տալ Երևանի հասարակութիւնից ընտրված մասնաժողովի որոշումը նոյն քաղաքի դպրոցի հոգաբարձութեան և դասադուլ արած աշակերտների հարցը քննելու համար։ Մենք մանրամասնութեան մէջ չենք մտնում, որովհետև այդ մեզ և թէ ընթերցողին շատ հեռու կը տանէ, միմիայն այսքանը կասենք, որ բոլորը գալով մի համաձայնութեան, ներում և մոռացութեան են տալիս ամեն բան, ու մի հօտ և մի հովիւ դարձած՝ բոլորն էլ սիրով յաճախում են դպրանոց։

Երևանը առ այժմ շատ խաղաղ է. երկու կողմն էլ քիչ քիչ սիրտ են առնում և գնում միմեանց փողոցները։

Գ. Աղաջանեանց

ՆՈՐ ՁԵՒԻ ԹԱԼԱՆ

(Նամակ Շուշուց)

Դարձեալ յանդգնութեան մի նոր ակտ կատարվեց, իր տեսակով շատ տարօրինակ ակտ։

Կարդացէք և ապշեցէք։

Ասպատակութեան բեմը դարձեալ Աղդամն է, այդ անգուսպ խուժանի օրրանը։

Քառասուն հատ անզէն ռուս գաղթականներ Աղդամից իջնում են դէպի Ջիբրայիլ և դեռ Փիրբուլաղ չը հասած՝ նրանց կանգնեցնում է մի ահարկու ձայն, Թուրքանչուն մի «սթօյ»։ Գաղթականները չար գուշակութեան պատճառ չունեն և ոչ էլ փախչելու սիրտ ու հնար։ Ի՞նչ պէտք է անեն նրանց «սթօյ» կանչողները։ Կանգնում են։

Ընդամենը հինգ հատ զինված Թուրքեր, երեսները սև մուր քսած, նոր ձևի փափախներով, Թօշկան ձիերը տակին, հասնում են դրանց և չորս կողմը կտրում։

—Չոքեցէք,—հրամայում են Թուրքերը։

Չոքում են։

—Ձեռներդ վեր բարձրացրէք։

Բարձրացնում են։

—Աչքներդ գետին ձգեցէք։

Ձգում են։

—Ով որ տեղիցը շարժվի և դիմադրութիւն ցոյց տայ՝ առաջին գնդակը նրան պէտք է դիպչի։

Տաւար մարդիկը հնազանդվում են։ Ճար ու հնար էլ չունեն չը հնազանդվելու։

Թուրքերը մտնում են դրանց, Թափ տալիս բոլորի գրպանները, կողոպտում եղած-չեղած կօպէկները և... յետոյ բաց Թողնում։

Լաւ է որ չեն կոտորում դրանց. շատ բարեխիղճ են մեր Թուրքերը։ Այդպիսի հրամանների տակ ենք, կամայ ակամայ պէտք է հնազանդվէին մեր տարագրված «գաղթականները»։

Եւ սա դարձեալ Գօլօշչապօվի վերջօրերին։

Էլի մի քիչ պատկառում էին նրանից, էլի մի քիչ վախենում։ Գնաց—ու դիմակները վեր հանեցին։

Եթէ ռուսների հետ այսպէս, հապա ինչ նոր օրեր են սպասում այն խեղճ հայերին, որոնք երբ և իցէ դժբաղդութիւն կունենան այսպիսի աւազակային խմբերի հանդիպելու։

Արձակվեց հանգիստ մնալու, խաղաղվելու և հաշտվելու հրաման, հայը իսկոյն հնազանդվեց դրան և չէ եղել մի դէպք, յունվար—փետրվար ամիսներին, գոնէ Շուշում և գաւառում, որ հայը մի Թուրքի խեթ աչքով նայած լինի, նրա մի մազին դիպած։ Իսկ Թուրքը—սա քանիերորդ դէպքն է։ Նա աչքը կերած ու ատամը կտրած տեղը իր որսին չէ խնայում։

Հասկանալ պէտք է այս ամենը, հասկանալ և համոզվել, որ Թուրքին կառավարութիւնը պէտք է հրամանի, երկիւղի և պատժի տակ պահէ, որպէսզի կարողանայ նրա վայրագութեանը սանձ դնել։ Ուրիշ կերպ ոչ մի հնար չը կայ աւազակին ուղղելու։

Եթէ չեն ուզում դարձեալ երկիրը արեան բաղանիք դարձնել, այս է միակ միջոցը—սաստել և պատժել։ Այլապէս մենք կանգնած ենք մի նոր գերեզմանի շեմքին, որ սպառնում է մեզ քաշել իր խորքը և մահախեղդ անել թէ ֆիզիքապէս, թէ նիւթապէս և թէ անտեսապէս։

«Սաստել և պատժել»։

Այդ տեսակներիցն էր Գօլօշչապօվի հրամանը, թէև մի քանի զեղծումներով, բայց թէ ինչո՞ւ կարճատև եղաւ, չը գիտենք։

Այսօր այստեղ սպասվում է նոր գեներալ-նահանգապետը։ Ի՞նչ նոր կարգադրութիւն կանէ... Սպասենք ու տեսնենք։

Նամակս վերջացրած, լուր հասաւ, որ աւտալեցի Թուրքերը յարձակվել են Աւդուռի հայ սայլապանների վրա և երկուսին գլխատել ու գլուխները տարել։ Մնացածը փախել և ազատվել են։

Ո՞ւր ես, Գօլօշչապօվ։

Տ.

ՈՉ ՄԻ ԶՈՀ

(Սիսիանի գիւղերի ռմբակոծութիւնը)

Գնդապետ Օզերօվսկին իր եռնական աշխարհագրորդ սպառնալիքով հասաւ նաև Զանգեզուրի Սիսիան խուլ գաւառամասը։ Փետրվարի 5-ին նա ռմբակոծեց Շաքի և Շուքար Թուրք և Անգեղակոթ հայ գիւղերը։ Շաքին ենթարկվեց Թնդանօթի չորս հարուածի, որից փլավեցին 7 տներ, Անգեղակոթը երեք հարուածի, իսկ Շուքարը—եօթը հարուածի. այդ գիւղում կան քանդված տներ և 15—20 սպանված։ Փետր. 7-ին Օզերօվսկին գաւառապետ Միտկևիչի հետ զօրքով ու Թնդանօթներով գալիս է Բռնակոթ. քահանան և գիւղի ծերունիները ընդ առաջ են գնում աղ ու հացով, նա չէ ընդունում այն՝ ասելով թէ այն ժամանակ միայն կընդունեմ, երբ դուք կը տաք ձեր միջի «բունտովշչիկ»-ներին ու ձեր հրացանները, երբ ոչինչ չեն ստանում՝ հրամայվում է կօզակներին իբր թէ խուզարկել, բայց իրմէ կողոպտել, կոտրում են շատ տան դռներ, որոնց բնակիչները հարևան գիւղերը կամ սարերն էին փախել, և սկսում են Թալանել. վերցնում են շատ Թանկագին իրեր, նոյն իսկ խալիչաներ ու կաթսաներ։ Ապա գիւղը պատժվում է Թնդանօթի 14 հարուածներով. Թեթև փլաւած են 2—3 տներ։ Անմիջապէս Ղարաքիլիսա գիւղից գալիս է Մ. վ. Տէր-Մովսիսեանը, այս նեղ օրերին ժողովրդի միակ մխիթարողն ու սրտացաւ բարեկամը, և արձանագրելով վնասը, որ 10,000 ր. է հասնում, դառնում է Գորիս։ Յետոյ ռմբակոծվում է մի հարուածով Աղբեանդ հայ գիւղը։ Զօրքը գիշերում է Թազագիւղում և ապա անցնում Ալիխաթեան։ Ուզ հայ գիւղը ստանում է չորս հարուած։ Փետր. 11-ին ռմբակոծվում են Վաղուդի և Աղուդի Թուրք գիւղերը. խուզարկութեան կամ Թալանի հետ կատարվում են նաև շատ անկարգութիւններ։ Ճշտութեամբ իր միսիան կատարելով՝ Օզերօվսկին անցնում է Գորիս։

Տեսնո՞ւմ էք՝ որքա՜ն հեշտ-հեշտ են կատարվում այս ամենը։ Այս ինչ գիւղեց այն ինչ գիւղը, այն ինչ գիւղից այս ինչ գիւղը, ռմբակոծում են ու անցնում. և մեծ մասամբ «ոչ մի զոհ»։ Այդ ինչպէս է, որ մի գիւղի վրա Թնդանօթի 14 հարուածներ են իջնում և գիւղը ազատվում է, առանց մի զոհ անգամ տալու։ Եթէ գիւղումն էին՝ ինչպէս չը վնասվեցին և եթէ գիւղում չէին՝ ինչ չափով վնասվեցին։

Ռմբակոծելուց առաջ գիւղացիները սարսափահար Թողնում էին գիւղը և փախչում հարևան գիւղերը կամ լեռները, թէև շատերի համար տուն ու տեղը անտէր թողնելն ու չոլերն ընկնելը շատ հեշտ չէր: Օրինակ՝ Բոնակոթ գիւղում նախ քան զօրքի գալը բաւական թւով կանայք ու երեխաներ կային դեռ, բայց հէնց որ լուրը հասաւ՝ կանայք երեխաներին շալակած, գրկած ու ձեռներից բռնած գիշերով փախան լեռներն ու ձորերը—սառցապատ ծերպերում ու քարատակերում մի ապահով տեղ ճարելու, սթարելու: Այո, կէս գիշերին, ձիւն-ձմրան, այդ անբախտները թողնում են իրանց թէև խոնաւ, թէև ցածլիկ ու մութ, բայց գոնէ մի քիչ տաք խրճիթները, թողնում իրանց սիրած օջախը և խնլացնոր, իրանց խղճուկ գոյութիւնը դէպի լեռները քարշ տալիս...

«Գալիս են»... կայծակի արագութեամբ անցնում են սոսկումով լի այդ բառերը գիւղի մի ծայրից միւսը և մի ակնթարթում բոլորին ոտքի հանում: Կարծես բոլորը դիւահարած լինէին, կարծես չար ոգիներով լցվել էին բազմաչարչար մարդկանց տները և հալածում նրանց: Մահվան կարմիր ոգին տեղ չէր տալիս նրանց... և գիւղը խռոված ու անհոգ դէպի սարերը շարժվեց... Սկսվեց... հին, սովորական փախը... Պատմութեան չարաբաղդ անիւը արագ թափով գլորվել ու կրկնում էր իր «անցածը», իր հերոսներին, իր շրջանները. ժողովուրդը դարձեալ թափառական ձմեռում էր ծուարած լեռների կրծքում, իրար վրա թափված: Ձիւնի համատարած սպիտակ սաւանի վրա շնչաւորների այդ սև կոյտը մի աւելորդ, միօրինակութիւնը խախտող կեղտոտ բիծ էր... Շտապելուց շատերը լաւ չէին հագնվել, մանաւանդ անտանելի էր երեխաների վիճակը, ևս առաւել չքաւորներինը: Իսկ ցուրտը կտրում էր: Սառը քամին իր կատաղի ոռնոցով լիզում էր նրանց և ձիւնի շերտով պատում բախտից հալածվածներին և կարծես նրանց ունեցած տաքութիւնն էլ խլել ուզում: Երկիւղի դողը միացած մրսելու դողի հետ սարսափելի շարժման մէջ էր դրել այդ աւելորդ կոյտին: Երեխաները քնձքնձում էին, լալիս: Նրանք սառչում էին: Մայրերը տաքացնում էին նրանց փայտացած փոքրիկ ձեռները իրանց բերնում և կրծքում, բայց ցուրտը նեղում էր: Շատերի լեզուն կտրվել էր, մարմինները կապտել, փայտացել: Մինչև լուսանալը դեռ շատ կար... մինչև դիւային ոգին իր ծանր թևով սոսկում մաղէր գիւղի վրա ու անցնէր... միայն թէ անցնէր:

Եւ այս անգամ էլ անցաւ «առանց մի զոհի»: Մի կերպ գիւղ հասան ու շատերը իսկոյն անկողին մտան: Եւ սկսվեց այն խուլ, անձայն կոտորածը, այն կոտորածներից մէկը, որոնց մասին այնքան քիչ է գրվում, քիչ հաշուի առնվում, բայց որը ամենից շատ է զոհեր տանում. այն ոչ անմիջական կոտորածներից մէկը, որ առաջանում են ցրտից, քաղցից և սրանց հետևանք համաճարակներից և այլն, որոնք հնձում են ամիսներ շարունակ և շատ ընտանիքներ դժբաղդացնում: Օրինակ՝ Բ. գիւղում մի 54 տարեկան գիւղացու միակ մխիթարութիւնը և նրա կեանքը քաղցրացնողն ու եռանդ տուողը մի բազմանդամ ընտանիքի համար օրն ի բուն աշխատելու՝ իր մինուճար 4 տարեկան փոքրիկ Հայկն էր, որ այդ «ոչ մի զոհերի» թւին անցաւ ցրտատար լինելով, մեռաւ երրորդ օրը և սև սուգի, լքման և յուսահատ դրութեան մէջ թողնելով անբաղդ ծնողներին:

Խեղճ անմեղ մանուկներ, որ զոհ էք գնում հրին ու սրին կամ մորթվում անդանակ ու աննկատելի միում. ո՞ր Հերովդէսը պէտք է պատասխանատու լինի ձեր արեան համար:

Թ—ձ—վ

ԴԵՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Բէրշուէթի գիւղ. Մեզ մօտ էլ կան կօզակներ. հիմա, երբ ժողովուրդը շատ նեղ դրութեան մէջ է, նրանք սկսեցին ամեն տեսակ հարկեր հաւաքել. հաւաքում են՝ գնահատութեան (ОЦѢНОЧНЫЙ) փող, անտառի, ուսումնարանի գիւղապետի և ուրիշ տուրքեր: Գիւղացիները քշում են իրանց տաւարը Գորի ծախելու: Կօզակներից մի քանիսը, որոնք քիչ թէ շատ մտնում են խեղճ գիւղացու դրութիւնը, այսպէս են ասում. այս կողմը սաստիկ աղքատութիւն է եղել, մենք էլ ենք խղճում ժողովուրդին, բայց կառավարութեան յանձնարարութիւնները սաստիկ են, և մենք ստիպված ենք կատարել: Կօզակները 50 հոգի են—ձիաւորներ, գիւղի հաշւով են կերակրվում, և օրական, միջին թւով 27—28 րուբլի է նստում նրանց կերակրելը: Շատ տանջանքներ են կրում այն մարդիկ, որոնք պաշտօնական, կամ մասնաւոր լրտեսների կողմից մատնվում են: Կօզակների հետ ման է գալիս Ջէրտ գիւղի բնակիչ Ղազար անունով մի պաշտօնական լրտես, որը շատերի վրա անտեղի մատնացոյց է անում, ասելով՝ սա ագիտատոր է, նա պրօպագանդիստ է, սա հարիւրապետ է, նա տասնապետ, սա բէրդան հրացան ունի, նա մաուզերի, ձերբակալեցէք: Խեղճերին ստիպում են խոստովանվել. բայց ինչում խոստովանվեն, երբ յանցաւոր չեն, զէնք չունեն: Պէտք է նկատել, որ կօզակների գլխաւորը բարի մարդ է, բայց լրտես Ղազարը, կօզակների գլխաւորը հեռանալուն պէս, կօզակներով կը շրջապատէ խեղճ գիւղացիներին, և պէտք է տեսնէք թէ ինչպէս անխիղճ են ծեծում գիւղացիներին, նրանց բղաւոցի ձայնը երկինք է բարձրանում: Յետոյ փող է պահանջում նրանցից, նրանք էլ դէս ու դէնից պարտք են վերցնում մի քանի րուբլի, տալիս են Ղազարին և նա մեղաւոր տեղ ընդունվածին անմեղ է հաշվում: Ահա այս տեսակ ցաւալի վիճակի մէջ ենք մենք, դժբաղդ բէրշուէթցիներս:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(Մարտի 3-ի նիստը)

Համագումարի իններորդ նիստը բացվեց ուրբաթ, մարտի 3-ին, ժամը 2-ին: Նախագահ Մալամա յայտնեց, որ քննվելու է հայերի վերջին 12-րդ կէտը—«Հաղորդակցութեան ճանապարհների պահպանութեան կազմակերպութիւնը»:

Այս հարցի առիթով բացատրութիւններ տուեց Շուշու պատգամաւոր պ. Լ. Ղուլեան: Բացատրելով, որ հաղորդակցութիւնների ապահովութիւն չը կար այն տեղերում, ուր ամիսներով տևում էին ջարդերը և թալանները, մանրամասն կանգ առաւ Եւլախ-Շուշի և Շուշի-Գորիս տրակտների վրա և նկարագրելով այդ տրակտների վրա կատարված դէպքերը, խնդրեց առանձին ուշադրութիւն դարձնել, որ այդ կարևոր կէտերի վրա հաղորդակցութիւնը ապահոված լինի: Ճառախօսը կարծում է, որ այդ նպատակին կարելի է հասնել զինւորական պահակախմբեր հաստատելով տրակտի վրա մինչև երկրի կատարեալ խաղաղացումը:

Շախմալիև, համաձայնելով որ տրակտների պահպանութիւնը անհրաժեշտ է, խնդրում է պահպանվել և Եւլախ-Նուխի տրակտը:

Ա. Խատիսեան ցոյց է տալիս խուզարկութիւնները դադարեցնելու անհրաժեշտութիւնը. ազգաբնակութեան մի մասը թոյլ է տալիս իրան խուզարկել միւս մասը:

Ս. Յարութիւնեան գտնում է, որ առհասարակ միջոցներ պէտք է ձեռք առնել ապահովացնելու հաղորդակցութեան բոլոր ճանապարհները: Բերելով մի քանի օրինակներ՝ թէ ինչպէս երկաթուղու գծի վրա անցորդները դուրս էին քաշվում վագոններից և մորթոտվում հէնց ամենքի, նոյն իսկ պահակախմբի աչքի առաջ, օրինակ Պօյլի կայարանում, կամ Ադջամում, երբ մորթոտվեցին օմնիբուսների ուղևորները, ճառախօսը գալիս է այն եզրակացութեան, որ ճանապարհների պահպանութիւնը միայնակ գործին չէ կարող օգնել, այլ անհրաժեշտ է ներշնչել ազգաբնակութեան այն գիտակցութիւնը, թէ սպանութեան կամ թալանի ամեն մի դէպք անխնայ կը պատժվի. անհրաժեշտ է պատասխանատուութեան ենթարկել նաև այն գիւղական համայնքները, որոնց շրջանում կատարվում է այդպիսի սոսկալի գազանութիւններ, օրինակ, եթէ Ադջամի ազգաբնակութիւնը պատժվէր, այդպիսի դէպքեր այլ ևս տեղի չէին ունենայ:

Աղայև: Եւլախ-Շուշի տրակտը միայն 60 վերստ տարածութեամբ անցնում է թուրքական տեղերով, իսկ Ադջամից մինչև Շուշի և հեռուն՝ ճանապարհը անցնում է հայաբնակ տեղերով: Այո, ճիշտ է, Ադջամում և ուրիշ տեղերում եղել են յարձակումներ օմնիբուսների վրա, բայց դրանք եղել են միայն պատասխան այդպիսի յարձակումների, հայերի կողմից: Ասկէրանում, որ այսուհետև հռչակաւոր է դարձել, ամրացել էր մի զինւորեալ հրոսակախումբ և պահում էր քաղաքը պաշարման մէջ, թողել էր նրան առանց պաշարի, բռնելով փուրգոնները, նոյն իսկ զօրքով ուղեկցված փուրգոնները: Դուք ասում էք, թէ պէտք է ապահովել ճանապարհների հաղորդակցութիւնը, ես ողջունում եմ այդ, բայց պէտք է այնպէս անել, որ անըմբռնելի հրոսակախմբերը, այդ եկւոր տարրերը, չը գրաւեն բերդերը և իրանց ձեռքում չը պահեն տեղական ժողովրդի բախտը: Մինչև որ հրոսակախմբերը գոյութիւն կունենան, խռովութիւնը կը շարունակվի, երբ ինձ վրա յարձակվում են, ես էլ նոյնը կանեմ: Այո, մինչև Ադջամ ճանապարհը բռնել էին թուրքերը, բայց Ադջամից Շուշի և Զանգեզուր ճանապարհը հայերի ձեռքումն էր: Պէտք է միջոցներ ձեռք առնել ոչ թէ երևացող մարդկանց դէմ, այլ և աներևոյթ և անըմբռնելի հրոսակախմբերի դէմ:

Վ. Մեհրաբեան: Ես որպէս Բորչալուի գաւառամասի ներկայացուցիչ, աւելորդ չեմ համարում հաստատել, որ մեր գաւառում էլ ճանապարհները անապահով են: Օրինակ Ղըլըճլու գիւղը, ուր շատ բէգեր և աղալարներ կան՝ մի քանի անգամ կողոպտել են ճանապարհորդներին: Սադախլու կայարանում Լամբալու գիւղացիք մի քանի անգամ յարձակվել են երկաթուղով անցնող ճանապարհորդների վրա և կողոպտել ու վիրաւորել են շատերին: Բացի այս, ինձ ընտրողները պարտաւորեցրել են զեկուցանել, որ մեր գաւառում հայ-թուրքական ընդհարումներ չեն եղել, այլ տեղացի բէգերի ու աղալարների առաջնորդութեամբ առանձին աւազակային խմբեր կողոպտել են ու աւերել ամենագեղեցիկ ու հարուստ գիւղատնտեսական կուլտուրան, երեք միլիոն արժողութեամբ, որով կը պարծենար ամեն մի ռուս և ռուսահպատակ: Եւ այս բոլորից յետոյ, գլխաւոր յանցաւորները դեռ մնում են անպատիժ: Մեր ժողովրդի կարծիքն է, մինչև գլխաւոր յանցաւորները չը պատժվեն ու չը վերադարձվեն ֆիւանները, խաղաղութիւնը երբեք չէ կարող հիմնաւոր լինել:

Հաջիև (որ գնացել էր Բաքու և նոր վերադարձել), ցոյց տուեց, որ մուսուլմանները խուզարկութիւն կատարում էին զէնք բռնելու նպատակով, ինչ վերաբերում է Ասկէրանի հարցին, այդ բաւական լուսաբանված է Ֆոն-Օզերովսկու կոչով:

Ջ. Իշխանեան բացատրեց, թէ պ. Աղայևի ասածը, երբ թէ Ադջամի դէպքերին եղել են պատասխան Ասկէրանի դէպքերը ճիշտ չէ. Ադջամի դէպքերը սկսվել են օգոստոսին, իսկ Ասկէրանինը—դեկտեմբերին: Ապա պ. Իշխանեանը մանրամասն նկարագրեց այն տրագիկական վիճակը, որի մէջ ամբողջ ամիսների ընթացքում գտնվում էր Շուշու հայ ժողովուրդը, այն պատճառով, որ թուրքերը բաց չէին թողնում Ադջամից ուտեստի տրանսպորտները: Շաքարի փութը 1 ր. էր ծախվում, նաւթը—60 կոպէկ: Հասցնվելով կատարեալ յուսահատութեան սովից և տարածված հիւանդութիւններից, հայերը վճռեցին. «դուք մեզ ստիպում էք սովամահ լինել, ուրեմն՝ դուք էլ սովամահ եղէք»: Նրանք գրաւեցին Ասկէրանի կիրճը, որով անցնում է ճանապարհը: «Շնորհակալութիւն գեներալ Գոլոշչապովին—նա ազատեց մեզ ճիշտ է, նա աւերեց մի քանի գիւղեր, բայց որքան ժամանակ մենք զարգացման այսպիսի աստիճանի վրա կը լինենք կանգնած, Գոլոշչապովները անհրաժեշտ են մեզ»:

Տէր-Աւետիքեան գտնում է, որ հարկաւոր է պահակներ դնել ճանապարհներին, բայց ռուսներից, և ոչ թուրքերից կամ հայերից:

Մի քանի բացատրութիւններից յետոյ, նախագահը, եզրափակեց վիճաբանութիւնները այն մտքով, որ «ժողովը ցանկալի է համարում հաղորդակցութեան ճանապարհների պահպանութեան սաստկացումը վարչութեան կողմից և ուղևորների խուզարկութիւնների դադարեցումը ազգաբնակութեան կողմից»:

Նախագահը յայտնելով, որ հայերի ծրագրի քննութիւնը աւարտվեց, անցնում է մուսուլմանների ծրագրի 10-րդ կէտի քննութեան, այն է—«Զինւորական վարչական միջոցները, ինչպէս էկզեկուցիա, վարչական աքսոր և այլն, կարող են գործադրվել միայն տեղական հաշտարար կոմիսիաների համաձայնութեամբ»:

Վ. Մեհրաբեան: Երբ որ մենք ցանկանում ենք, որ իշխանութիւնը գլխաւոր յանցաւորներին ադմինիստրատիւ կարգով պատժելիս և էկզեկուցիաներ նշանակելիս, թուրքերից և հայերից ընտրված կոմիսիայի մասնակցութեամբ կատարվի, այդ դէպքում անհրաժեշտ է, որ կոմիսիաների մէջ չը մտնէին բէգերը, աղալարները ու բռունցքները, այլ դրանք լինէին գլխաւորապէս գիւղացիներից, որովհետև գլխաւոր յանցաւորները կը մնան անպատիժ և նրանց փոխարէն կը պատժվեն մանր յանցաւորները: Զօրօրինակ երէկվայ ժողովում թուրք բէգերն ասում էին, որ ումից առանալ թալանած իրերը, որտեղ գտնել, այդ, բոլորը խուլիգանների գործն էր, այն ինչ ես կարծում եմ, որ խուլիգանը գողանում է այնքան, որքան նրան երկրորդ օրը բաւական է ծխախոտի և օղիի համար, նա երբեք չէ կարող իւրացնել և անհետք կորցնել տասնեակ հազարներ արժեցող իրերն ու անասունները, այդ միմիայն ընդունակ են անել բէգերը, աղալարները և բռունցքները:

Նախագահը զանգի օգնութեան դիմեց յայտնելով, որ այդ տեսակ խօսքերը անյարմար են:

Աղայև: Համաձայն ենք, բայց պէտք է այդ կոմիսիաներում չը լինեն նաև հայ բուրժուազիայի և ինտելիգենցիայի ներկայացուցիչները. (աղմուկ, [illegible]):

Գանձակի նահանգապետ Կալաշև: Բոլոր արտակարգ միջոցները՝ էկզեկուցիա, աքսոր այժմ ձեռք են առնում ընդհանուր-նահանգապետները:

Մալամա: Բայց Աստուած տայ հասնենք այն օրին, երբ գեներալ-նահանգապետների կարիք չը լինի: Առ այժմ ցանկալի է, որ ծրագրված կոմիսիաները կամ խորհուրդները լինեն գեներալ-նահանգապետներին կից, իսկ երբ կեանքը կը մտնի իր նորմալ ընթացքի մէջ, այն ժամանակ այդ խորհուրդները կը լինեն նահանգապետներին կից:

Ժողովը համաձայնում է այդպիսի ձևակերպութեան հետ և անցնում է մուսուլմանների ծրագրի 11-րդ կէտին—«Միջոցներ ձեռք առնել որ ցանկացողները վերադառնան իրանց աւերված տեղերը՝ վերահաստատվեն»:

Ի նկատի ունենալով, որ այդ կէտը արդէն քննված էր հայերի ծրագրի քննութեան ժամանակ, ժողովը մանրամասն քննութեան չենթարկեց, և անցաւ մուսուլմանների ծրագրի վերջին 12-րդ կէտի քննութեան, այն է—«Բացատրված պայմանները ընդունելուց և ուրիշ միջոցների փաստական գործադրութիւնից յետոյ ձեռնարկել ամբողջ ազգաբնակութեան զինաթափման»:

Այս հարցը առաջ է բերում ջերմ և կրքոտ վիճաբանութիւններ: Հայերը պնդում են, որ պէտք է միանգամայն հանել այդ կէտը ծրագրից, թուրքերը—որ պէտք է թողնել:

Հաջիև: Հէնց այժմ կարելի է դիմել զինաթափութեան:

Կարաբէգով: Ի հարկէ, եթէ կառավարութիւնը կարող է խաղաղութիւն հաստատել, ինչու զինաթափ չանել:

Կ. Խատիսեան գտնում է, որ այդ կէտի գործադրութիւնը այն հետևանքը կունենայ, որ խաղաղ մարդկանց զինաթափ կանեն և կը թողնեն անպաշտպան. իսկ աւազակները կը մնան զինված: Ոչ ոք ցանկութիւն չունի զէնք կրել: Երբ խաղաղութիւն կը հաստատվի, զինաթափութիւնը ինքն իրան կը լինի:

Ջիաթխանով: Մենք չենք յայտնում, որ մենք զէնք չունենք: Ոչ, ունենք, բայց մեր ունեցած զէնքի որակը այլ է: Կեանքը ինքն ստիպում է մուսուլմաններին զէնք կրել: Թուրքերի մեծ մասը խաշնարածներ են և հովիւը իր երկու օգնականներով չէ կարող դաշտում, սարում առանց զէնքի մնալ: Մենք իրաւունք չունենք այդպիսիներից զէնքը խլել: Մի տարբերութիւն պէտք է լինի հայերի և թուրքերի մէջ զէնքի կողմից. հայերը զինված են քաղաքներում, իսկ մուսուլմանները դաշտերում: Քաղաքում զէնքը ոչ ոքի պէտք չէ, պէտք է զինաթափ լինել, բայց հովուին, խաշնարածին, որ պէտք է կռվէ և աւազակների և վայրի գազանների հետ, զէնքը հարկաւոր է: Եթէ հայերն էլ պարապում են խաշնարածութեամբ, նրանց ևս հարկաւոր է զէնք: Այժմ մուսուլմանները կատարելագործված զէնք միայն քիչ քանակութեամբ ունեն, բայց եթէ ընդհարումներ լինեն, շատ կունենան: Այժմ մուսուլմանի համար ամենաթանկ բանը—զէնքն է: Զինաթափման ժամանակ իշխանութիւնները պէտք է շատ ուշադիր լինեն, որ զինաթափ չանեն նրանց, որոնց չը պէտք է անել:

Մեհրաբեան: Պէտք է զինաթափ անել աւելի անհանգիստ տարրը: Էլ ինչի համար է 2 միլիոն ծախսվում պահակախմբերի վրա: Մուսուլմանները աւելի լաւ են զինված:

Ս. Յարութիւնեան: Այդ հարցը յարուցանելը վաղաժամ է: Պէտք է յետաձգել մինչև երկրի խաղաղացումը:

Հաջիև: Զինաթափութիւնը լուրջ հարց է: Ամենքը զէնք ունեն և մեր երեխաները մեծանում են ու զէնք են տեսնում: Խնայեցէք երեխաներին: Արտասահմանում, տներում եթէ զէնք կայ, միայն կոլլեկցիայի համար, զէնքի տեղ—գրադարաններ կան: Ահա գրադարաններ ձեռք բերենք (Հաւանութեան նշաններ):

Կ. Խատիսեան: Մենք յամենայն դէպս գրադարաններ ունենք, դուք ձեռք բերէք:

Թոփչիբաշև: Այդ կէտը հանել չէ կարելի: Այժմ, ճիշտ է, վաղաժամ է, բայց պէտք է ձեռնարկել զինաթափման, երբ միջոցները կը գործադրվեն և խաղաղացումը կատարեալ կը լինի:

Ա. Խատիսեան: Մեզ այստեղ հրաւիրել են միջոցներ առաջարկելու: Ես հակառակ եմ այդ կէտի միայն գլխաւորապէս այն պատճառով, որ վախենում եմ չը լինի ոստիկանութեան ստորին գործակալները այդ կէտը ի չարը գործ դնեն և միակերպ չը վերաբերվեն ազգաբնակութեան այս և այն մասին: Ինքն Փոխարքան քանիցս յայտնել է, թէ զինաթափութիւնը առաջ է բերում միայն որոշ տարրերի զինւորումը: Այդ որոշման վատ գործադրողները կը խլեն զէնքը հէնց նրանից, ում զէնքը պէտք է: Այդպիսի թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, պէտք է հանել այդ կէտը ծրագրից: Վերջապէս թող այդ կէտի վերաբերմամբ վարվեն օրէնքի համաձայն: Փառք Աստուծոյ Ռուսաստանում 12 հատոր օրէնք կայ:

Ձայներ: 16 և ոչ 12 հատոր:

Կարաբէգով: Այժմ զինաթափ չանել, որովհետև շատերին պէտք է զէնքը—ահա 12-րդ կէտի միտքը: Քոչւորները չէ՞ որ պէտք է պաշտպանվեն գայլերից:

Մալամա: Ուրեմն ժողովը համարում է խնդիրը վաղաժամ:

Պետրոսեան: Ուրեմն խնդիրը զինաթափութեան մասին չէ, այլ զինաթափ չանելու մասին:

Եղիշէ վարդապետ: Եթէ հնարաւոր լինէր միօրեայ վիճակագրութեան նման մի օրում զինաթափ անել ամենքին—դա հիանալի բան կը լինէր և մենք բոլոր սրտով կողջունէինք այդ միջոցը: Բայց հնարաւո՞ր է այդ:

Մեհրաբեան: Թուրք ներկայացուցիչների փաստաբանութիւնը ծիծաղելի է, որ իրանք զէնք քիչ ունեն և եթէ բոլորին էլ զինաթափ անեն, պէտք է թուրք տաւարածների ու խաշնարածների զէնքերը չը խլել: Այն ինչ, պէտք է անպատճառ զինաթափ անել ազգաբնակութեան անհանգիստ տարրին և ոչ խաղաղ երկրագործին. իսկ այդ անհանգիստ տարրը թուրք բէգերի ու աղալարների աւազակային խմբերն են, որոնց պատճառով, մենք տարեկան ոստիկանական պահակների համար վճարում ենք երկու միլիոն: Իսկ եթէ թուրքերը զէնք քիչ ունեն, դա առաւել ևս ծիծաղելի է. Թուրքը զինվում է օրօրոցից, հայերը երբեք չէին կարող մի քանի ամսվայ ընթացքում նրանց պէս զինվել: Վերջապէս մամուլը և պաշտօնական տեղեկութիւնը հաստատել են, որ շատ անգամ հինգ հարիւր (500) յարձակվող զինված թուրքերին դիմադրող հայերը հազիւ եղել են 50—60: Թուրքերը ձիաւոր գունդեր էլ ունէին 1000—2000, իսկ հայերը նոյն իսկ 50 ձիաւոր էլ չունէին: Իմ կարծիքով, որպէս զի թուրքերի շարունակ զինվելուն վերջ դնել, անհրաժեշտ է որ կառավարութիւնը խիստ հսկողութիւն նշանակէ Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանների վրա, որտեղից շարունակ զինվում են իրանց հաւատակիցները:

Հաջիև: Իսկ դուք ո՞րտեղից էք ստանում ռումբերը: Մենք չենք ստանում Պարսկաստանից և Թիւրքիայից զէնքեր, ընդհակառակը, ինքներս ենք ծախսում նրանց մեր անպէտք զէնքը. (Ծիծաղ): Եթէ մենք ընդունենք 12-րդ կէտը, ժողովուրդը կը տեսնէ այդ կէտի մէջ խրախոյս դէպի սպառազինութիւնը:

Աղայև: Այն 2 միլիոն րուբլին, որ մենք ծախսում ենք աւազակութեան դէմ կռվելու, ազնուութեան վրա դրված մի տուրք է միայն (Ձայներ՝ ճիշտ է, ճիշտ է): Աւազակութիւնները բացատրվում են զուտ տնտեսական պատճառներով. ազգաբնակութեան մի մասը արագաբար առաջադիմել է և վերցրել ամեն բան, միւս մասը յետ է մնացել—ահա ինչով պէտք է բացատրել աւազակութիւնները և աւարառութիւնները:

Ա. Բաբեան, բողոքում է այս մեղադրանքի դէմ, որ բարդում են հայերի վրա, իբրև թուրքերի շահագործողներ և ասում է, որ կռվել պէտք է ոչ թէ զէնքով, այլ կուլտուրայով, մասսայի մտաւոր և բարոյական մակերևոյթը բարձրացնելով:

Աղայև: Խօսելով շահագործողների մասին, ես ի նկատի չունեմ հայերին, այլ ընդհանրապէս հարստահարիչներին: Հայերի մէջ շատ կան, ճիշտ է, հարստահարիչներ, բայց մուսուլմանների մէջ ևս սկսել են երևալ և նրանք երբեմն հայ հարստահարիչներից վատթար են: Ես ասում եմ միայն, որ աւազակութիւնների հակումը մուսուլմանների ընդաբոյս յատկութիւնը չէ (Ձայներ հայերի կողմից. «մենք այդ չենք ասել»):

Կարաբէգով: Պէտք է արագացնել վարչական խորհուրդների կազմումը:

Լ. Ղուլեան, պնդելով այդ կարծիքի վրա, յայտնում է, որ եթէ լինէին այդ խորհուրդները, օրինակ Շուշում չէին աքսորվի այնպիսի պաշտօնական անձինք, ինչպէս բժիշկ Բահաթրեան և Մելիք-Շահնազարեան:

Աղայև: Ինչո՞ւ չէք խօսում և Վէզիրովի մասին:

Ղուլեան: Որովհետև չը գիտեմ նրա մասին:

Յ. Սպենդիարեան: Եթէ մենք ընդունենք 12-դ կէտը, ժողովուրդը դժգոհ կը լինի մեզանից: Այժմ զինաթափ անել ժողովուրդը անկարելի է, որովհետև այժմ ստեղծվել է այն դրութիւնը, որ Եւրոպայում կոչում են զինւորված խաղաղութիւն: Առհասարակ, ես չեմ հաւատում խաղաղութեան:

Ձայներ հայերի և թուրքերի կողմից: Մենք հաւատում ենք, հաւատում:

Հաջիև: Պարոններ, ես նոր վերադարձայ Բաքուից: Պէտք էր տեսնել թէ ինչպէս այդտեղ ինձ շրջապատում էին հայերը և թուրքերը և անդադար հարցնում, երբ պէտք է կնքենք հաշտութիւն. խնդրեցին այստեղ ևս ձեզ յայտնել: Ես հաւատում եմ հաշտութեան (աղմկալից ծափահարութիւններ):

Աղայև: Անհրաժեշտ է, որ մեր ժողովը ասէ ժողովրդին, թէ շուտով կը հասնէ այն րօպէն, երբ զէնքի հարկաւորութիւն չի լինի: Այդ նկատառումով մենք ևս գրել ենք այդպիսի վճիռ:

Բալաեբար: Ամեն մի առաջարկութեան մէջ պէտք է լինի որոշութիւն, իսկ մեր առաջ դրած ձևակերպութիւնը պարունակում է անորոշութիւն. խնդրեմ ասացէք, ինչպէս պարզենք այն ժամանակամիջոցը, որից յետոյ կարելի է զինաթափ անել, մի շաբաթ, մի ամիս, մի տարի, թէ թողնենք այս բանը բարեհայեցողութեան և կամայականութեան: Պէտք է որոշ մի բան ասել կամ բոլորովին զէն գցել այդ կէտը:

Նախագահը պարզեց, որ հայ պատգամաւորները պնդում են 12-րդ կէտը բոլորովին հանելու վրա, իսկ մուսուլմանները պահանջում են այդ կէտը պահել:

Հաջիևը յայտնեց, որ ինքն առանձին կարծիք կը յայտնէ:

Ուրեմն երկու կողմերի ծրագիրները սպառված են, յայտարարեց նախագահը:

Մելիք-Բէգլարեան յարուցեց մի նոր հարց—ապահովացնել գիւղացիներին հնարաւորութիւն տալով դաշտային աշխատութիւններ կատարելու: Այդ առիթով խօսեց Ս. Յարութիւնեան, որ յայտնեց, թէ հարկաւոր է տալ գիւղացիներին պահակախմբեր:

Մալամա յայտնում է, որ Փոխարքան արդէն այդ մասին կարգադրութիւններ է արել:

Շախմալիև առաջարկում է կազմել տեղական մասնաժողովներ՝ հոգևորականութեան, բէգերի և ժողովրդի ներկայացուցիչներից, որոնք շրջեն գիւղէ գիւղ և քարոզեն հաշտութեան գաղափարը: Այս առաջարկութիւնը ընդունվում է. Նախագահը յայտնում է, որ վերջին նիստը կը կայանայ շաբաթ օրը, մարտի 4-ին, ժամը 3-ին, լսելու 1) քոչի հարցի մասին ընտրված մասնաժողովի զեկուցումը, 2) առաջին կէտի, այն է պատճառների հարցի մասին ընտրված մասնաժողովի որոշումը, 3) բոլոր միւս կէտերի մասին կայացած որոշումները:

—

Վերջապէս, վաղ, կը վերջանայ խորհրդակցութիւնը, ասում են իրար պատգամաւորները և հեռանում պալատից ժամը մօտ 6-ին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Փետրվարի 21-ին

Քանի մօտենում է գարունը, լրագիրների էջերում յաճախակի առիթ ենք ունենում հանդիպելու գեղեցիկ առաջնորդների և կարեկից սրտի եղբայրական խորհուրդների, որոնք բոլորն էլ պտտում են գիւղացու և գարնան՝ նրա անելիք վար ու ցանքսի շուրջը: Մեզ՝ զանգեզուրցիներիս համար էլ անձին զրկանք և ցաւ է տեսնել թուրք և հայ ժողովրդի կարված յարաբերութիւնը և այդպիսի յարաբերութեան տուած վնասը ընդհանուրին:

Սպասենք, բայց մինչև ե՞րբ:

Ե՞րբ է լինելու այն գեղեցիկ օրը, ասում են մաճկալ գիւղացիք, երբ մենք բախտ կունենանք տեսնել, թէ հայ և թէ թուրք գութանւորներն իրար կողքի, ինչպէս են վարում և հօտաղները ինչպէս են իրանց զիլ հօռովելներով միմեանց եռանդ բերում:

Եւ իրօք, մեզնում եղել են շատ դէպքեր, երբ միևնոյն արտում վարելիս են եղել հայի և թուրքի գութանները, և հայի ու թուրքի հայ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՔՈՉՒՈՐՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Քիւրդերին կառավարելու երկրորդ նախագիծը պատկանում էր գեներալ-մայոր Սուսլովին, որը այն կարծիքին էր, «որ անցած օրինակների հիման վրա քոչւոր ազգերին քաղաքացիական կարգով կառավարել, չը նայած բոլոր անյարմարութիւններին, աւելի նպատակայարմար է, քան զինւորական կառավարութիւն հաստատելը առանձին համայնքների, զանազան ցեղերի կամ ընտանիքների վրա, որոնք շատ յաճախ ցրված են լինում երկրի զանազան մասերում և ապրում են խառն քաղաքացիական կարգով կառավարվող նստակեաց ժողովրդների հետ: Այդպիսի դէպքերում զինւորական կառավարութիւն հաստատելը անյարմար է և շատ տեղերում նոյն իսկ բացարձակապէս անիրագործելի: Առանձին զինւորական կառավարութիւնը կարող է օգտաւէտ լինել մանաւորապէս պատերազմական դրութեան ժամանակ կամ էլ պատահարների դէպքում: Մեզ մօտ քոչող քիւրդերը կարող են անվտանգ և անմիջապէս օգտաւէտ լինել, ոչ այնքան իրանց տուած հարկերով, որքան հաւատարմութեամբ՝ ունենալով մեր մասին լաւ կարծիք: Իսկ լաւ կարծիք կարող են ունենալ նրանք միայն այն ժամանակ, եթէ դէպի քոչւորները լինել աւելի ներողամիտ: Նրանք կարող են մեզ շատ օգտաւէտ լինել թիւրքիայում, տարածելով մեր մասին նպաստաւոր կարծիքներ: Դա կը թեթևացնէ մեր ապագայ յարաբերութիւնները թիւրքական քիւրդերի հետ և պատերազմական գործողութիւնների միջոցին օգտաւէտ կը լինի»: [illegible] հեղինակը առաջարկում էր չը ծանրաբեռնել քիւրդերին որ և է տուրքերով կամ հարկերով: Դրանից պետական գանձարանը առանձին վնաս չէր ունենայ, բայց դրական հետևանքը այն կը լինէր, որ կամրապնդէր մեր ազդեցութիւնը Թիւրքիայի քիւրդերի մէջ: Գ. Սուսլովը այդ հանգամանքին առանձին նշանակութիւն էր տալիս ևս առաւել այն պատճառով, որ այն ժամանակվայ գոյութիւն ունեցող կարգերի պատճառով, քիւրդերից հարկ հաւաքելը անձին դժուարութիւնների հետ էր կապված, նոյն իսկ յաճախ անիրագործելի: Բացի դրանից քիւրդերից անվտանգ հարկ պահանջելը կը ստիպէր նրանցից շատերին թողնել մեր երկիրը և անցնել թիւրքաց սահմանը, որի առաջը առնել յամենայն դէպս մենք չէինք կարող: Այնպէս որ գեներալ-մայոր Սուսլովի կարծիքով, քոչւորներին հարկաւոր էր տալ բացի վերև յիշած արտօնութիւններից հարկերի վերաբերեալ՝ «տալ նրանց ազատութիւն քոչել, որտեղ որ իրանց համար նպատակայարմար կը գտնեն, մինչև անգամ չարգիլել կրկին Թիւրքիա վերադառնալը»: Տալ միանգամայն ազատութիւն տեղափոխվել և վայելել հարկային արտօնութիւններով, հեղինակի կարծիքով անհրաժեշտ էր քաղաքական տեսակէտից—այսինքն այդպիսով կարելի կը լինէր գրաւել Թիւրքաց սահմանի վրա գտնվող քիւրդերին դէպի մեր կողմերը:

Քիւրդերին կառավարելու համար գեն. Սուսլովը առաջարկում էր այսպէս ասած ժամանակաւոր զինւորական կառավարութիւն, որի ղեկավարը պիտի լինէր «դիւանը», որը պիտի կազմվէր պատուաւոր քեօխաներից և քիւրդական ցեղերի գլխաւորներից: Այդ «դիւանի» նախագահը պիտի լինէր Երևանի զօրքի նաչալնիկը, որպէս զի զինւորական ոյժի ազդեցութեամբ քոչւորներին ստիպէր հնազանդ լինել: Իսկապէս գլխաւոր դեր կատարողը պիտի լինէր նաչալնիկը կամ դիւանի նախագահը և նրա ձեռքին կենտրոնացած լինէր բոլոր իրաւունքները, իսկ դիւանի անդամները պիտի լինէին միայն զարդի համար, որպէսզի միայն ունենային «պատուաւոր անունները»: Ուրիշ տեսակ չէր էլ կարող լինել, որովհետև դիւանի ծառայութիւնները միմիայն հազւագիւտ և բացառիկ դէպքերում հարկաւոր կը գար, օրինակի համար մի որ և է սովորականից դուրս մի դէպքի առիթով, երբ ցեղերի ներկայացուցիչների համաձայնութիւնը չէր կարող նշանակութիւն ունենալ:

Իսկ ինչ վերաբերում էր քիւրդերի ներքին կեանքի կառավարութեանը, այսինքն՝ կարգ ու կանոնի, վարքի և բարքի պահպանութեանը, վէճերի լուծման, զանազան երկրորդական ոստիկանական պարտաւորութիւններին—գեն. Սուսլովի կարծիքով այդ պարտաւորութիւնները պէտք է յանձնվէր քիւրդական համայնքների գլխաւորներին ինչպէս այդ գոյութիւն ունէր Թիւրքիայում: Մի և նոյն ժամանակը պէտք է ամեն ջանք գործ դնել, որպէս զի քիւրդերի գլխաւորների նշանակութիւնը և ազդեցութիւնը զրոյի հասցնել, և անշեղ հետևել այդ քաղաքականութեան: Հեղինակի կարծիքով այդ հանգամանքի վրա պէտք է ուշադրութիւն դարձնել ևս առաւել այն պատճառով, որ հէնց իրանց քիւրդերի մէջ նրանց հեղինակութիւնը տարէց տարի աւելի նուազում է և յաճախ առանձին ցեղերի մէջ պատահում է, որ իրանց գլխաւորներից անբաւական քիւրդերը հեռանում և գնում միանում են ուրիշ ցեղերի կամ համայնքների հետ:

Այդ տարաձայնութիւնները մինչև անգամ այնքան սուր կերպարանք էին ստանում, որ քիւրդերից շատերը, կորցնելով հաւատ դէպի իրանց գլխաւորները, թողնում էին քոչւոր կեանքը և բնակվում էին նստակեաց ժողովուրդների հետ: «Եղել են օրինակներ, ասում է գեն. Սուսլովը, որ Թիւրքիայի քիւրդերը անբաւական մնալով իրանց գլխաւորների ոտնձգութիւններից, դիմել են (1854 թւին) Երևանի զօրքի գլխաւորին, որ այս վերջինս նրանց վէճերը և գործերը բարեխղճաբար վճռելու համար ուղարկէ գոնէ մի կօզակ: Այդ խնդիրքը, ի հարկէ, ի մեծ ուրախութիւն քիւրդերի, կատարվում էր անյապաղ»:

Բայց չը նայած այդպիսի բացայայտ օգտաւէտ ձգտումներին քիւրդերի կողմից դէպի մեր իշխանութիւնը, այնուամենայնիւ նախագծի հեղինակը կտրականապէս որոշում է, որ քիւրդերին միմիայն պէտք է հաշւի առնել և ոչ մի դէպքում չէ կարելի նրանց վրա յենվել և ապագայի համար ծրագիրներ կազմել քիւրդերին կառավարելու համար: Նրանց ներքին կեանքի կառավարութիւնը պէտք է թողնել որ իրանց գլխաւորները ինչպէս ուզում են կառավարեն, իսկ այդ գլխաւորներին նրանց պատւի և դիրքի համեմատ պատիւներ տալ: Բայց այդ արտաքին ձևի պատիւները, հեղինակի կարծիքով, ոչ մի ժամանակ չը պէտք է անցնեն քաղաքավարութեան սահմանները կամ որքան այդ պատշաճ է մի հին ցեղի ներկայացուցչի և չը պէտք է նրանց հետ առանձնապէս յարմարվել կամ նրանց յանցանքներին ներողամտաբար վերաբերվել: Ընդհակառակը այդպիսի դէպքերում հեղինակը խորհուրդ էր տալիս լինել ըստ կարելոյն խիստ և անշեղ պաշտպանել արդարութիւնը՝ այդ հանգամանքը քիւրդերի վրա շատ նպաստաւոր ազդեցութիւն կարող էր անել:

Ահա ընդհանուր գծերով գեն. Սուսլովի ծրագիրը քիւրդերին կառավարելու գործը կանոնաւորելու վերաբերեալ: Այս առաջարկը հաւանութիւն չը գտաւ տեղական ադմինիստրացիայի կողմից:

Երևանեան զինւորական նահանգապետը, բացառելով «դիւանի» օգտակարութիւնը, գտնում էր.

1) որ եթէ քիւրդերին թոյլ տրվի քոչել այն տեղերը, որտեղ որ իրանք ցանկանան, առաջ կը գան մեծ անկարգութիւններ, որոնք կը ծանրացնեն նստակեաց ազգաբնակութեան կեանքի պայմանները:

2) որ թոյլ տալով քիւրդերին մի համայնքից միւս համայնքը ինքնագլուխ քոչելը, անկարելի կը լինի հարկերը կանոնաւոր հաւաքել և համայնքների գլխաւորին հնարաւորութիւն կը տրվի խուսափել զանազան յանցաւորները յանձնելուց:

3) որ ազատելով 1853 թւին փախստական և ապա վերադարձած քիւրդերին հարկատուութիւնից, անբարեխղճութիւն կը լինի և կը նշանակէ աւելորդ տեղից զիջողութիւն անել և ցոյց տալ բացարձակ թուլութիւն: Իսկ ինչ վերաբերում է նախկին Թիւրքահպատակ քիւրդերին, որոնք անցել են և բնակվել մեզանում, նրանք ենթարկվելով ընդհանուր կանոններին՝ կօգտվեն ընդհանուր արտօնութիւններով:

Աչքի առաջ ունենալով վերոյիշեալ թերութիւնները, Երևանի գեներալ նահանգապետ գեներալ-մայոր Նազարովը քիւրդերին կառավարելու խնդրի վերաբերեալ ներկայացրեց մի ծրագիր 1857 թւին: Այդ ծրագրի համաձայն գլխաւոր կառավարութիւնը քիւրդերի վրա պէտք է լինէր նահանգապետի իրաւասութեան տակ, որը կարող էր միջնորդ հանդիսանալ բարձր կառավարութեան առաջ քիւրդերի կարիքների և պահանջների վերաբերութեամբ: Նահանգապետից յետոյ իրաւունքների կարգով պիտի լինէր գաւառապետը, որ քիւրդերի համար պիտի անուանվէր գաւառային հոգաբարձու: Գաւառապետի անմիջապէս կարգադրութեան տակ պէտք է լինէին 3 պրիստաւներ, որոնց և պէտք է յանձնվէին քոչւորներին կառավարելու անմիջական պարտաւորութիւնները: Պրիստաւները պէտք է ունենային թարգմաններ, քարտուղարներ, սուրհանդակներ և մի քանի կօզակներ մօտակայ սահմանապահ զինւորների պահակախմբից:

Վէճերը և գանգատները քիւրդերի մէջ, որոնք կրում էին քաղաքացիական բնաւորութիւն, Երևանի նահանգապետի կարծիքով պէտք է վճռէին միջնորդ դատարանները, որոնք պէտք է լինէին այն տեղերում, ուր կը բնակվէին պրիստաւները: Վերջապէս ստորին պաշտօնակատարը քոչւոր համայնքի մէջ պէտք է լինէր քեօխվան իր օգնականով, որոնք միջնորդ դատաւորի նման հաստատվում էին գաւառապետից:

Գաւառական հոգաբարձուների և գիւղական քեօխվաների պաշտօնները հաւասարեցնվում էին նոյնատեսակ պաշտօնեաներին, որոնք գոյութիւն ունեն նստակեաց բնակիչների մէջ: Իսկ ինչ վերաբերում էր պրիստաւներին, սրանք բացի գիւղական քեօխվաներից, պէտք է առանձին կերպով ազդեցութիւն պահպանէին քոչւոր հասարակութիւնների վրա:

Ենթադրվում էր յանձնել նրանց, բացի զուտ ոստիկանական պարտաւորութիւններից մասամբ էլ օրէնսդրական իշխանութիւն: Նրանք պէտք է հսկէին որ քիւրդական հասարակութիւնների մէջ տիրէին խաղաղութիւն, հանգստութիւն, կարգապահութիւն, անձի և ստացվածքի անձեռնմխելիութիւն, պէտք է աշխատէին ամեն մի ոճիր և յանցանք իր սաղմում ու ջուրը, գրեթէ անբաժան են եղել: Հայ և թուրք հօտաղները փոխադարձաբար աղ ու հացի են կանչվել: Թուրքերի և մեր անցեալ կեանքը դիտելով, տեսնում ենք թէ հայը որքան համակրութիւն, որքան պատիւ ու անուն ունէր թուրքի մօտ: Մանաւանդ մեր մի շարք գիւղերի հայ և թուրք ժողովրդի խառն ապրելը մի այնպիսի դրացիութիւն էր ծնել, որ շատ անգամ հայ գանգատաւորը դէպի թուրքի տուած վճիռը աւելի մեղմ էր և զիջող, քան իր հարազատ եղբօր:

Մինքէնդ, Ալըղուլիշէն, Խոզնավար, Հարար, Դարաբաս և Ղարաքիլիսա գիւղերի հայ և թուրք ազգաբնակութիւնները, որոնք տասնեակ տարիներ իրար հետ վարել, վաստակել, ցանել, հնձել և կալսել են իրանց հացահատիկները, ինչ են անելու նրանք այս եկող գարնան:

Երբ մօտենում էր գարունը, երբ գալիս էին պարբերաբար կատարվող գարնանային աշխատանքները, հայ և թուրք սերմերի փոխանակութիւն էին սկսում, մէկի պակասը միւսն էր լրացնում՝ նրան սերմացու տալով:

Եւ այժմ, երբ մօտենում է ժամանակը, որ նոյն մարդիկ հողին պէտք է յանձնեն գարի, հաճար, կորեկ, ոսպ, կտաւահատ և այլն, այդ նոյն մարդիկ միմեանց արած լաւութիւնները մոռացած, սևերես միմեանցից, որպէս եղբայրասպան թշնամիներ, անջատված, զանազան գիւղերում, իրանց ազգակիցների մօտ, անողոք բախտի աղի-լեղի օրերն են քաշում:

Եւ կայ հնար կրկին նրանց մերձեցման. կարո՞ղ ենք տալ հայ գիւղացուն իր տունը, իր ապրուստը, նրա հայկական օջախը, որին նա այնպէս ջերմ կպած էր և կրկին իրան է քաշում իր տարաբախտ զաւակին: Դուցէ հնարաւոր եղաւ տալ հայ գիւղացուն տուն, տեղ, ապրուստ, լծկան եզներ և մինչև իսկ սերմացու. սակայն կարո՞ղ ենք տալ նրան, որ նրա կարիքներից կարևորն է՝ ապահով կեանք, կեանք, որ այնքան թեթև արժէքաւոր երևաց թուրքի աչքում և մենք այժմ էլ տանենք մազից կախված այդ կեանքը, յանձնենք հայի նախկին դրկից և հաւատարիմ ճանաչված թուրքին:

Մեր խեղճ եղբայրներին մենք լոկ խորհուրդներ ենք տալիս, որ գնան և նախկին կեանքը վարեն: Սակայն, մենք կը լինենք նրանց առաջին թշնամին, երբ նրանց, առանց կեանքի ապահով դրութիւն տալու, առանց նրանց անհրաժեշտ կարիքները հոգալու, լոկ խորհուրդներ տանք իրանց գիւղերը դառնալու: Ուրեմն, մինքէնդցիք գնան իրանց առնուտէր Միխայիլի (թուրք) դուռը հայցեն. նա, որ կատաղած գոչում էր, «Չըմթար, գըրըն ուշաղլար», այժմ ինչ աչքով պէտք է նայէ նոյն սրից ազատվածների վրա:

Երբ մեր եղբայրները դառնան իրանց տեղերը, ուր նախկինի պէս, թուրք ժողովուրդը իր քանակով աւելի գերադաս լինի, մերայնոց դրութիւնը անտանելի կը լինի, (իրանց սակաւութեան համար եմ առարկում), որովհետև մենք նրանց ստրկացնող և խեղճացնող մթնոլորտ կը տանք: Սակայն այլ բան կը լինէր, եթէ մենք նոր ընտանիքներ աւելացնելով նրանց վրա, տեղափոխվէին նրանք Մինքէնդ, Խոզնավար, Հարար և այլն, թերևս հայերը իրանց մեծամասնութեամբ վստահ կեանք վարել կարողանան. մեծամասնութեան շրջապատում կեանքն էլ ապահով կը լինի:

Կառավարութիւնը, որ չէ կարողանում ապահով կեանք նոյն իսկ իր պաշտօնեաներին խոստանալ, մի՞թէ կարող է իր խաւարած անաչառ աչքով որ և է հայ համայնքի ապահով կեանք տալ: Ապագան մեզ համար անչափ անխռով և բարեբաստիկ կը լինէր, եթէ իրօք այդ խաւարած անաչառ աչքը մի օր լոյս ընկնէր:

Ամեն երկրում, ուր կան և գոյութիւն ունեն կառավարութեան պաշտօնեաներ, որոնք զուրկ են անաչառ աչքերից, հայի օրը սև է ու աչքը արցունքոտ և կեանքը անապահով:

Սազանդարեան

ՑԱՒԱԼԻ ԴՐՈՒԹԻՒՆ

Այսպիսի մի ժամանակ, երբ ամբողջ Ռուսաստանը Պետական Դումայի ընտրութիւններով է զբաղված, երբ ամբողջ երկրի մամուլն ու ինտելիգենցիան, զանազան քաղաքական կուսակցութիւնների բաժանված, ամենամեծ ճիգեր է թափում, նախ քան ընտրութիւնների կատարվելը, ժողովրդի ամեն խաւերի մէջ քաղաքական ինքնագիտակցութիւն մտցնել, բացատրելով ու հասկացնելով նրանց, թէ ով ում և թէ ինչու համար պէտք է իր քուէն տայ և այլն և այլն, մենք, կովկասցիներս, մանաւանդ հայ և թուրք բնակիչներս, զբաղված ենք միմեանց մորթոտելով, կողոպտելով ու ամբողջ երկիրը քար ու քանդ անելով: Մամուլն ու ինտելիգենցիան էլ, ի հարկէ, ամեն խնդիր մի կողմ թողած, ստիպված են այդ եղբայրասպան կռիւներով զբաղվել, ինքնապաշտպանութեան մասին հոգ տանել, թշնամացած կողմերին հաշտեցնելու ու գրգռված կրքերը հանգստացնելու համար խորհուրդներ կազմել: Ահա սա ինչ ցաւալի ողբերգական դրութիւն է:

Ընտրութիւններից ինչ արդիւնք կարող ենք մենք յուսալ և սպասել, քանի որ մեր ժողովուրդը քաղաքացիական իրաւունքների մասին ամենատարրական հասկացողութիւն անգամ չունի: Դարերի ընթացքում մեր ժողովուրդին շարունակ ասել ու կրկնել են, թէ դա միմիայն պարտականութիւններ ունի, իսկ իրաւունքների մասին ո՛չ կը համարձակվէր խօսք արտասանելու, դրանք վերապահված էին գաւառապետներին, պրիստաւներին և այլ մեծ ու փոքր, պաշտօնական թէ անպաշտօն իշխանաւորներին: Ճիշտ է, ամբողջ Ռուսաստանի ժողովուրդը այդ մի և նոյն դրութեան մէջ էր գտնվում, բայց և այնպէս վստահութեամբ կարելի է ասել, որ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների մէջ (ի բաց առեալ, ի հարկէ, ասիական հողերում ապրող վայրենի ցեղերին), մինչև իսկ մեր դրացի վրացիների մէջ, քաղաքական ինքնագիտակցութիւնը շատ աւելի է զարգացած, քան մեր դժբախտ հայ և թուրք ժողովուրդների մէջ:

Այդ մենք բացատրում ենք պարզապէս նրանով, որ երկար ժամանակներից ի վեր ռուս, լեհ, հրէայ, լատիշ ու այլ ժողովուրդների մէջ եղել են զանազան քաղաքական կուսակցութիւններ, որոնք թէ բանաւոր և թէ մամուլի միջոցով շարունակ քաղաքական ու դասակարգային ինքնագիտակցութիւն են տարածել: Իսկ մեզանում... Օհ, ի հարկէ, մեզանում էլ եղել են հասարակական ու քաղաքական գործիչներ և արտասահմանեան մամուլ, սակայն ինչ են տուել նրանք մեր ժողովրդին, ինչ քաղաքական ինքնագիտակցութիւն են մտցրել նրա մէջ: Թող ների ինձ ասել, որ մեր քաղաքական գործիչները և արտասահմանեան ազատ մամուլը մեծ մասով, եթէ չասենք բացառապէս, չափազանց նման են եղել մեր վաղեմի կրօնականներին, որոնք շարունակ քարոզում էին ժողովրդին, թէ բոլորովին աչք չը պիտի ունենայ այս փուչ աշխարհի վրա, այլ ամբողջ կեանքում պէտք է հոգ տանել այն մասին, որ երկնքի արքայութիւնը վայելեն: Մեր քաղաքագէտները, ի հարկէ, հանդերձեալ կեանք չէին քարոզել, բայց նրանք էլ քարոզում էին, թէ Կովկասի կամ Ռուսաստանի մասին երբեք չը պիտի մտածէ, նա այդ երկրի վրա աչք չը պիտի ունենայ ու այստեղ ո՛չ մի անելիք չունի:

Ինչպէս տեսնում էք, այդ երկու տեսակի քարոզների մէջ եղած տարբերութիւնը շատ էլ մեծ չէ: Երկու դէպքում էլ Կովկասի հայերին ասվում էր, որ նա իր երկրում ոչ հայրենիք և ոչ մի անելիք չունի: Եւ դրա տրամաբանական հետևանքը այն եղաւ, որ երբ ամբողջ Ռուսաստանը բռնվեց յեղափոխական շարժումներով, Կովկաս-Ռուսաստանի հայերը մոլորված ու չեզոք դրութեան մէջ մնացին, մասամբ էլ նոյն իսկ ռէակցիայի կողմը բռնեցին: Իսկ յետոյ էլ վրա հասան թուրքական յարձակումները հայերի դէմ, որոնք ահա մի տարուց աւելի է, ինչ կլանել ու կլանում են հայ ժողովրդի, մամուլի, ինտելիգենցիայի ու երիտասարդութեան ամբողջ ուշքն ու միտքը, ոյժն ու էներգիան:

Այս էլ ճիշտ է, որ եկեղեցապատկան կալուածները գրաւվելուց յետոյ մեր քաղաքական ու հասարակական գործիչները յանկարծ սթափվեցին ու Կովկասում էլ շարժումների նշաններ ցոյց տուեցին, բայց այդ շարժումները լոկ մարտական-ռազմական բնաւորութիւն էին կրում ու ամբողջապէս պտտվում էին գօլիցինեան հայակեր քաղաքականութեան ու գրաւված կալուածների շուրջը: Այդ շարժումները ոչ մի ներքին կապ չունէին ամբողջ Ռուսաստանի ընդհանուր քաղաքական շարժումների հետ: Ժողովրդի միտքն ու գաղափարը զարգացնելու փոխարէն, նրանք միայն գրգռում էին նրա ազգայնական ու շովինիստական զգացումները: Եւ այս բոլորի հետևանքը այն եղաւ, որ մեր ժողովուրդը չը կարողացաւ օգտվել այն սքանչելի ու հազուագիւտ պատմական մոմենտից, յեղափոխութեան նախօրեակի շրջանից, երբ ժողովուրդները մի քանի ամիսների ընթացքում քաղաքականապէս շատ աւելի են զարգանում, աւելի գիտակից են դառնում իրանց քաղաքացիական իրաւունքների ու շահերի, քան թէ տասնեակ ուրիշ տարիների ընթացքում: Մեր համարեա թէ ամբողջ ժողովուրդը, սկսած վաճառականներից, գործակատարներից, արհեստաւորներից, բանւորներից մինչև գիւղական շինականը, մնաց ստրուկ, թէև երկար քնից զարթնած, սթափված, բայց քաղաքականապէս անգիտակից ստրուկ:

Եւ այդ ժողովուրդը վաղը կամ միւս օրը պիտի հրաւիրվի Պետական Դումայի համար ընտրութիւններ կատարելու: Ի՞նչ քաղաքական դաւանանքով նա պիտի մօտենայ քուէտուփին: Չէ՞ որ սա եկեղեցու երեսփոխ կամ քաղաքային ուպրավայի անդամ ընտրել չէ: Այստեղ պէտք է շատ մեծ քաղաքական հմտութիւն, դասակարգային շահերի գիտակցութիւն և այլ շատ բաներ ունենալ, որոնցից, կրկնում ենք, դեռ շատ ու շատ զուրկ է մեր ժողովուրդը:

Խոստովանվեցէք, որ սա մի շատ ցաւալի դրութիւն է, որից դուրս գալու համար շատ մեծ եռանդ ու էներգիա է հարկաւոր: Մեր դրացի վրացիները, ինչպէս վերևում ասացինք, այդ տեսակէտից մեզնից շատ աւելի բաղդաւոր են: Իսկ մեզնից փոքր ինչ աւելի յետամնաց՝ թիւրիմացութեամբ այսօր մեզ թշնամի համարված թուրք ժողովրդին կարելի է համարել:

Իսկ դա մի մեծ առաւելութիւն չէ մեզ համար, այնպէս չէ:

Խ.

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի ուսումնական ծրագրի մէջ (որը հաստատված է ներքին գործերի մինիստրութիւնից) յիշվում է «մանկավարժութիւն», իբրև անհրաժեշտ առարկայ մի դպրոցում, որը ուսուցիչներ է պատրաստում:

Հէնց այդ առարկան է, որ իրաւունք է տալիս աւարտողին ուսուցչական ասպարէզ մտնելու: Չէ՞ որ մի առարկայ գիտենալը դեռ բաւական չէ այն դասաւանդելու համար, պէտք է գիտենալ և դասաւանդման եղանակները, միջոցները: Եւ տասնեակով պէտք է հաշւել թեմականաւարտ ուսուցիչների թիւը, —ուսուցիչների, որոնք ուսուցչութիւն են անում թեմական տուած վկայականի ուժով:

Սակայն՝ ուսուցչի համար այդ կարևոր, անհրաժեշտ առարկան երբեք չէ դասաւանդվել Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում: Թեմական դպրոցի վարչութիւնը վկայական է տուել. այդ վկայականները աչքի առաջ ունենալով հայ հասարակութիւնները հրաւիրել են ուսուցիչներ, որոնք ուսուցչութիւն անել չեն սովորել: Այսպիսով վարչութիւնը երկար տարիներ մոլորեցրել է հայ հասարակութիւնը:

Այսպէս չէ կարող շարունակվել: Մանկավարժութիւնը և սրան կից փորձնական դասերը պէտք է պարտաւորեցուցիչ լինեն թեմականում: Աւելին ևս. թեմական դպրոցը, որ յատկացրված է մի ահագին թեմի կարիքներին ծառայելու համար և այդ պատճառաբանութիւնով թեմից օժանդակութիւն է ստանում, —պէտք է և կարող կենտրոն լինի թեմի հայ ուսուցիչների համար՝ ամառնային մանկավարժական կուրսերի և ուսուցչական ժողովների միջոցով, որոնք կը կայանան նրա շէնքում:

Ես կարծում եմ, որ՝

1) Նոր-Նախիջևանի թեմական դպրոցում իբրև պարտաւորեցուցիչ առարկայ պէտք է դասաւանդվի մանկավարժութիւնը իր ճիւղաւորութիւններով. սրան կից պէտք է լինեն փորձնական դասեր՝ գործնական վարժութիւնների համար. և 2) Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի վարչութիւնը պէտք է իր վրա յանձն առնէ ամառնային մանկավարժական կուրսեր կազմելու և պարբերական ուսուցչական ժողովներ հրաւիրելու գործը:

Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի շրջանաւարտ ուսուցիչ՝

Վ. Բաբեան

Եւպատօրիա (Ղրիմ)

ՆԱՄԱԿ ԳՈՐԻՍԻՑ

Մարտի 1-ին

Մեր հասարակական ներկայ կեանքում «ազգային սովորութիւն» անուան տակ քօղարկված են այնքան բազմաթիւ ձևականութիւններ, որոնք բացի նիւթական վնասից ոչ մի դրական օգուտ չեն տալիս մեզ: Ճիշտ է կան սովորութիւններ, որոնք անքակտելի կապանքների նման դեռ մարմնացած են մեր ժողովրդի մէջ և էլ պէտք է մնան վերջինիս հոգին, զգացմունքը չը վիրաւորելու համար. բայց կան և այնպիսի ձևականութիւններ, որոնք ժամանակի առաջադիմական քայլերի հետ կորցրել են իրանց վաղեմի նշանակութիւնն ու կարևորութիւնը հասարակութեան աչքում և հարկաւոր է մի չնչին հարուած նրանց միանգամայն ոչնչացնելու համար:

Անցեալ անմոռանալի գործադուլների ժամանակ տեղիս հայ հասարակութիւնը մի քանի օրինակելի առաջադիմութիւն է արել, որ մի քանի խոչընդոտ հանգամանքների շնորհիւ չը կարողացաւ ժամանակին հաղորդել լրագրութեանը: Հայոց դպրոցի հոգաբարձութիւնը, տեղիս փոխանորդ Խորէն վարդապետ Մուրադբէգեանի նախագահութեամբ մի ժողով գումարեց, որը մի շարք հարցեր քննելուց յետոյ՝ ի միջի այլոց քննութեան առարկայ դարձրեց հոգեհացը կամ, ինչպէս ասում են տեղացիք՝ քելեխը: Աչքի առաջ ունենալով որ առանց ժողովրդի համաձայնութեան անկարելի է վերջնական լուծում տալ այդպիսի ջուր վերցնող խնդրի, հոգաբարձութիւնը որոշեց առաջիկայ կիրակի օրը ծխականների ժողով նշանակել: Այդպէս էլ եղաւ: Փոխանորդի ազդու ճառով բացվեց ժողովը եկեղեցու մէջ, որտեղ բազմաթիւ թեր ու դէմ կարծիքներ յայտնելուց յետոյ վճռվեց հետևեալը. 1) քելեխի միանգամայն վերացումը, 2) այն գումարը, որ պիտի ծախսվէր քելեխի վրա, նրա կէսը կամ քառորդը յանձնել նոր հիմնելիք կասսային, 3) կասսայից նիւթական օգնութիւն հասցնել ժողովրդի կարիքներին, զարկ տալ դպրոցական գործին և բոլոր այն ամենին, որոնք ծառայում են ժողովրդի բարօրութեանը, 4) հաստատել մի մասնաժողով երեք—չորս մարդուց բաղկացած՝ զբաղվելու յատուկ այդ խնդիրներով: Ահա ծրագրի հիմնական կէտերը: Պարզ բան է, որ եղան և հակառակ խօսողներ, բայց ո՞վ էր լսողը. մեծամասնութիւնը միաձայն որոշելով վերոյիշեալ կէտերը, «ձիրս քելեխի» ասելով, ցրվեցին մեծ բաւականութեամբ:

Ի հարկէ, եթէ մի նորութիւն է մտնում հասարակութեան մէջ, մանաւանդ երբ այդ նորութիւնը ոչնչացնող է հանդիսանում դարևոր հին սովորութիւնների, պարզ է, որ միանգամից չէ հասնում իր կատարելութեան: Թէև քելեխը միանգամայն վերացված է և բոյկոտ է նշանակված այս կանոնին հակառակ գնացողներին, բայց դժբախտաբար կասսան դեռ չէ հիմնվել, որը ամենագլխաւորն է և ամենակարևորը մեր ներկայ արեան իրականութեան ժամանակ: Բայց յոյս կայ որ ծրագրի այդ կէտն էլ կիրականանայ: Ուրախալին այն է, որ տեղացի հարևան վրացիք գովաբանելով հայերիս արածը, աշխատում են փորձեր անել ոչնչացնելու նոյնանման մի քանի ձևականութիւնները:

Վ. Մամաջանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, կիրակի, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան վերին դահլիճում կը կարդացվեն դասախօսութիւններ՝ Ի. Սեմէօնովի «Պետական Դումայի ընտրութիւնները», Ա. Բալանթարի՝ «Ագրարային խնդիրներ»: Այդ առաջին դասախօսութիւններից յետոյ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան բիւրօն մտածել է կազմակերպել դասախօսութիւնների մի ամբողջ շարք կուսակցութեան ծրագրի զանազան կէտերի վերաբերմամբ: Մուտքը ազատ է բոլոր ցանկացողների համար:

—

Փոխարքայի դիւանատունը հաղորդել է Թիֆլիսի նահանգապետին, որ Փոխարքան յանձնարարել է հրաւիրելու Ախալցխայի գաւառական ընտրողական գործավար մասնաժողովի համար, ուր չը կայ ազնուականութեան գաւառական պարագլուխ, կալուածատէր Ի. Եագ. Օրբէլեանին, իսկ Ախալքալաքի համար պաշտօնաթող գեներալ Դ. Ի. Մուսխելովին:

—

Պետական Դումայի ընտրութիւնների համար կազմված ընտրողական ցուցակները գողանալուց զերծ պահելու համար, նահանգական իշխանութիւնը մտադիր է առաջարկել քաղաքային վարչութեանը, ցուցակները վերջացնելուց յետոյ, ընտրողական բոլոր դոկումենտները և ցուցակները պահելու ոչ թէ վարչութեան մօտ, այլ նահանգական գանձարանում:

—

Թիֆլիսի վրաց կուսակցութիւնը մասնաւոր խորհրդակցութիւնների ժամանակ որոշեց Պետական Դումայի պատգամաւորութեան թեկնածու ընտրել ազնուականութեան կողմից Փոթիի քաղաքագլուխ Ն. Ն. Նիկոլաձէին, իսկ մի ուրիշ խումբ իշխան Ճավճավաձէին:

—

Ինչպէս մեզ հաղորդում են, Կովկասեան ոստիկանութեան գլխաւոր կառավարիչ գեներալ Շիրինկինը Բաքուից վերադառնալուց յետոյ, մտադիր է այցելել Անդրկովկասի բոլոր նահանգական քաղաքների մի մասը, քաղաքական կալանաւորների յանցաւորութիւնը տեղն ու տեղը որոշելու համար:

—

Քաղաքային վարչութեան ստատիստիկական բիւրօն ստացել է ընտրողական ցուցակներ Թիֆլիսի նահանգական վարչութիւնից (46 ընտրող), Թիֆլիսի բուսաբանական այգուց (14), Թիֆլիսի զինուորական-ֆէլդշերների ուսումնարանից (12), Թիֆլիսի քաղաքային I պօստ-հեռագրատան կառավարչից (3), I արական պրօգիմնազիայի տեսչից (6), լրացուցիչ ցուցակներ Թիֆլիսի ուղիների մասունից (20), կոնտրօլի պալատից (109), Թիֆլիսի երկրաչափական ուսումնարանից (5), Թիֆլիսի զինվորական խանութների ծառայողներից (7), և շրջանային ինտենդանտների վարչութեան ծառայողներից (61):

—

Վաղը, Թիֆլիսի քաղաքային դումայի հերթական նիստում քննվելու են ի միջի այլոց հետևեալ հարցերը. Մետեխի և նահանգական բանտերի բանտարկեալների սնունդի մասին, Թիֆլիս քաղաքի 1906 թւի եկամուտքի նախահաշիւը և արհեստաւորաց դպրոցում մայրենի լեզուով դասաւանդելու հարցը:

—

Կոմս Իգնատիեվի մասնաժողովը մուսուլմանների հարցի քննութիւնը կը սկսէ ներկայ մարտ ամսում: Մուսուլմանները սակայն մտադիր են բողոքել իրանց հարցի քննութեան դէմ այդ մասնաժողովում: Իրանց բողոքը նրանք պատճառաբանում են նրանով, որ մուսուլմանների հարցի մշակումը յանձնվել է Վ. Ն. Չերէվանսկուն, որը յայտնի է որպէս հակառակորդ մուսուլմանների, որի մասին նրանք արդէն յայտնել են կոմս Վիտտէին մուսուլմանների պատգամաւորութեան ընդունելութեան ժամանակ:

—

Քաղաքային վարչութիւնը յանձնարարել է վարչութեան կից հաստատված տեխնիքական խորհրդին մանրակրկիտ կերպով մշակելու Ցիցիանովի վերելքը ամրացնելու ծրագիրը և ներկայացնել իրան քննելու համար:

—

Թիֆլիսի կոնտրօլի պալատի գանձապահ փոխ-գնդապետ Մալինովսկու սպանութեան նախնական քննութիւնը արդէն վերջացել է: Գործը արդէն ուղարկված է կովկասեան զինուորական շրջանի դատարանին դատախազին կալանաւորված Ս. Գլոնտիին դատի ենթարկելու համար:

—

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը հրաւէր է ստացել միանալու «Սթափութեան լիգային» Պետերբուրգում և եթէ կարելի լինի, յանձն առնելու շրջանային բաժանմունքներ կազմակերպելու գործը:

—

Ներկայ տարվայ բոլոր նորակոչ զինուորները Թիֆլիսից ուղարկվել են Ռուսաստանի ներքին նահանգները:

—

Թիֆլիսի այգեգործական դպրոցին կից բացվում է ատաղձագործական արհեստանոց, ուր աշակերտներին սովորեցնելու են փեթակներ շինել և գիւղատնտեսութեան նպատակներ համար անհրաժեշտ իրեր պատրաստել:

—

Քաղաքային իւրիս-կոնսուլտ երդ. հաւատ. Ի. Ս. Տէր-Սահակեանի հրաժարութեան պատճառով, նրա պաշտօնավարութեան համար քաղաքային վարչութիւնը հրաւիրել է երդ. հաւատ. Գ. Մ. Դուլուխանովին:

—

Անդրկովկասեան երկաթուղիների ժամանակաւոր կառավարիչը մարտի 2-ի իր շրջաբերականում, ընդունելով, որ ծառայութիւնից արձակվածները, դեկտեմբերի գործադուլից յետոյ, նշանակված ժամանակին ծառայութեան չը գալու համար, արդէն բաւականաչափ պատիժ են կրել, այժմս հնարաւոր է համարում նրանց վերստին ծառայութեան ընդունել, բայց միայն նրանցից այնպիսիներին, որոնք իրանց նախկին ծառայութեան պատճառով կայարանի ծառայութեան մասին կամ բաժանմունքի կառավարիչների կողմից արժանաւոր կը համարվին, ուստի այդպիսիների մասին առաջարկում է նախ զեկուցումն տալ:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը երկրորդ անգամ խնդրամատոյց է եղել նահանգապետին քաղաքային այգիները և զբօսարանները բանալու մասին, որովհետև փակելու շնորհիւ այգիներում բոյֆէտ և բուտկաներ պահողները հրաժարվում են բնակարանի վարձերը վճարել:

—

Ուրբաթ, մարտի 3-ին, կովկասեան զօրքերի շտաբում, կովկասեան գրենադերեան դիվիզիայի սպաներից կազմված մի մասնաժողով, գեներալ Սուլէյմանովի նախագահութեամբ՝ կայացրեց նիստ քաղաքից պիրոքսիլինի (դինամիտ) պահեստները փոխադրելու կամ Ալեքսանդրօպօլ քաղաքը և կամ քաղաքի սահմանից շատ հեռու: Այդ նիստին մասնակցում էր քաղաքի կողմից ընտրված յատուկ ներկայացուցիչ իրաւաբ. Ս. Միրզօյեանը: Դինամիտի պահեստները գտնվում են ներկայումս քաղաքիս 10-րդ մասում, քաղաքային հողի վրա, Նախալովկայի կողմերը: Իրաւաբ. պ. Միրզօյեանը մի հանգամանօրէն զեկուցումն ներկայացրեց, որը նախօրօք քննվել և հաստատվել էր քաղաքային վարչութեան առանձին նիստում, և որի մէջ յիշված էին այն հիմունքները և պատճառները, որոնք անհրաժեշտ են դարձնում այդ պահեստների փոխադրութիւնը ներկայ տեղից: Ամենագլխաւորը այդ հիմունքներից, անտարակոյս, պէտք է համարել քաղաքի և բնակիչների շահերը, որովհետև գտնվելով քաղաքի սահմանում՝ այդ պահեստները միանգամայն արգելք են հանդիսանում, որ քաղաքը լայնութեամբ զարգանայ, ընդարձակվի և հետևապէս քաղաքի թէ արդիւնքը աճեն և թէ աւելի չքաւոր ազգաբնակութիւնը հնարք ունենայ քաղաքի այդ ծայրագոյն մասում բնակութիւն հաստատել: Իրաւաբ. պ. Միրզօյեանը 6 կէտից բաղկացած պատճառաբանութիւններ ներկայացնելով պնդում էր փոխադրել պահեստները քաղաքիս սահմանից. սակայն զինուորական մասնաժողովը, որը ինտենդանտ օֆիցերներից էր կազմված, չը համաձայնվեց այդ պատճառաբանութիւնների հետ և մտադիր է, երևի իր շահերի տեսակէտից, յիշեալ պահեստները թողնել իր այժմեան տեղերում: Միայն մէկ կէտի հետ զինուորական մասնաժողովը իր համաձայնութիւնը յայտնեց քաղաքի ներկայացուցչի հետ, այն է՝ որ յանուն մարդասիրութեան, այն տները, որոնք շինված են քաղաքից գրաւված (զաւթած) հողերի վրա և գտնվում են յիշեալ դինամիտի պահեստների շուրջը, չը քանդել և այդպէս տանտէրերին նիւթական մեծամեծ վնասներից ազատել:

—

Հինգշաբթի, մարտի 2-ին, Թիֆլիսի րէալական ուսումնարանի «Ծնողական շրջանի» ժողովը կայացաւ, որի մէջ յայտնվեց, որ բարձր դասարանի աշակերտների ծնողները չեն ցանկանում մասնակցել այդ «շրջանին»: Ժողովը որոշեց՝ միջնորդել կովկասեան շրջանի ուսումնական մասի պ. Հոգաբարձուի առաջ, որ ներկայումս գործող «Ծնողական շրջանը» իրաւունք ունենայ շարունակել իր գործունէութիւնը և ճանաչվի իշխանութիւնից որպէս օրինական (լեգալ) մարմին:

—

«Жизнь и Свобода» թերթի հաղորդած լուրը՝ թէ մարտի 12-ին որոշված է ընդհանուր գործադուլ անել, կատարեալապէս հնարովի է: Թերթը ասում է, որ այդ տեղեկութիւնը նա քաղել է բօրսայում, բայց բօրսայում, գործարանատէրերի ու բանկիրների մէջ, ուր «Русское Государство»-ն ուղարկել է իր թղթակցին, այդ տեսակ տեղեկութիւնները միանգամայն հերքվում են: Մի քանի արդիւնաբերութիւնների մէջ արդարև խլրտումներ նկատվում են, բայց այնպիսի համեմատ չափերով, որ ոչ մի հիմք չեն տալիս խօսելու գործադուլի հնարաւորութեան մասին:

—

Զինուորական շրջաններում լուր է պտտում, որ քննիչ մասնաժողովը գեներալ Ստեսսելին դատի է ենթարկում: «О. Ж.»

—

Ներկայումս Պետերբուրգում գտնվող Վլադիվօստօկի բերդի նախկին կոմենդանտ գեներալ Կազբեկը, ինչպէս լսում ենք, դատի է ենթարկվելու: Նա մեղադրվում է անցեալ տարի հոկտեմբերին և նոյեմբերին գործած մի շարք ապօրինաւութիւնների համար, կոմենդանտ եղած ժամանակ: «Ж. и Св.»

—

կանգնեցնել, իսկ ամենագլխաւորը՝ նրանք պէտք է աշխատէին ընտելացնել քիւրդերին «աշխատանքին և արդիւնաբերութեան» և համոզէին, «նստակեաց կեանքի առաւելութիւնների մէջ, իբրև ամենայուսալի և լաւ միջոց ձմեռ ժամանակը անասնապահութիւնը պահպանելու նպատակով»:

Պրիստաւները պէտք է հետևէին հարկերի կանոնաւոր դասաւորման և որ հարկերն իր ժամանակին հաւաքված և գանձարանին յանձնված լինէին: Գիւղական ժողովների և խորհրդակցութիւնների ժամանակ նրանք չը մասնակցելով որոշումներին, պէտք է ազդէին ընտրողների վրա այնպէս, որ չընտրվէին դատապարտված կամ անվստահելի անձիք: Նրանք պէտք է նշանակէին ընտրութիւնների, ժողովների և խորհրդակցութիւնների ժամանակը:

Քրէական գործերի վերաբերեալ նրանք կարող էին վճռել իրանց իրաւասութեամբ միմիայն այն գործերը, որոնք սովորական են քիւրդերի կեանքին և եթէ սեփականութեան է վերաբերում, ոչ աւելի քան 50 րուբլի արժէք ունեցող գործը, կամ էլ՝ եթէ աննշան վէրքեր են հասցրած: Այդ դեռ բաւական չէ, պրիստաւներին առանձնապէս պարտաւորեցրած էր հաւաքել տեղեկութիւններ նրանց յանձնված համայնքների, օրէնքների և սովորութիւնների մասին, այդ տեղեկութիւնները պատշաճ եղանակով և սիստեմատիկական կարգով դասաւորել և ունենալ միշտ այնպիսի դրութեան մէջ, որ կարելի լինի ամեն մի ժամանակ ներկայացնել իշխանութեան, եթէ ապագայում հարկ զգացվի, այդ տեղեկութիւններից օգտվել, հասարակութիւնների կեանքի մի որ և է կէտին աւելի յարմարվելու նպատակով: Մինչև անգամ հարսանիքներին և ժողովրդական ուրախութիւններին մասնակցելը, որպէս զի նախազգուշացնվի անբարոյականութիւնը և բարքերի գայթակղութիւնը, պէտք է կազմէին պրիստաւների պարտաւորութիւնը:

Ամեն մի համայնքում պիտի լինէր միջնորդ դատարան: Դատաւորների թիւը ենթադրվում էր ոչ աւելի քան երեք հոգի, որոնցից մէկը քիւրդերի համայնքներում պիտի լինէր մօլլան, իսկ եզիդիների—գրել կարդալ իմացող հոգևորականներից մէկը: Դատաւորները պիտի ընտրվէին ամեն տարի: Քիւրդերի դատավարութեան ժամանակ ղեկավարող սկզբունքները պիտի լինէին շարիաթի օրէնքները ըստ Ղուրանի, իսկ եզիդիների վերաբերեալ—նրանց մէջ ընդունված սովորութիւնները և ժողովրդական իրաւունքները:

Դատաւորները կարող էին քննել և վճռել միմիայն քաղաքացիական գործեր, օրինակի համար, սեփականութիւնների հաստատելը, զանազան պարտաթղթերի և այլ պարտքերի հատուցման գործերը: Նրանց որոշումները վերջնական վճիռներ պէտք է լինէին և բողոքել բարձր իշխանութեան առաջ անկարելի պիտի լինէր, եթէ մինչև վճիռը կայացնելը ոչ մի ազդարարութիւն չէր անվել, իսկ եթէ նախապէս յայտնվում էր, որ եթէ վճիռը իրանց չը բաւականացնէ, նրանք վերապահում են իրաւունք բողոքելու բարձր իշխանութեան առաջ, այն ժամանակ գործը պիտի քննէ կամ պրիստաւը կամ էլ գաւառապետը, նայած թէ ինչ գումարի գործ է և կամ ում իրաւասութեան համապատասխան գործ է:

Իսկ ինչ վերաբերում էր այնպիսի քրէական գործերին, որոնց վճռելը բարձր է գաւառապետների իրաւասութիւնից, այս վերջինները անմիջապէս պիտի զեկուցանէին նահանգապետին, որը պէտք է վերջնականապէս վճռէր այդ հարցը: «Այդպիսի գործերի չարքին էին պատկանում, ըստ նախագծի, գողութիւն, առևանգութիւն, թալան, սովորական կռիւ, տաւարի փախցնել առանց մահացու վէրք հասցնելով ապրանքի տիրոջը, ընդհանրապէս վնաս հասցնել մինչև 1000 րուբլի, իսկ եթէ աւարառութիւնը, թալանը, բռնաբարութիւնը, զինաւորված ոյժով դիմադրութիւն ցոյց տալը և բոլոր քրէական յանցանքները սեփականութեան և ունեցուածքի վերաբերեալ, գերազանցում են 1000 րուբլի արժողութիւնից, նահանգապետը պէտք է ներկայացնէր Կովկասեան Փոխարքային իր փաստալից կարծիքով»:

Աւելի ևս կնճռոտ հարցերը, որոնք պահանջում էին բազմակողմանի ուսումնասիրութիւն և երկար մտածողութիւն, նահանգապետը պէտք է յանձնէր նահանգական ատեանին, որտեղ հարցը կուսումնասիրվէր, վերջնական որոշում կը ստանար:

Ահա ընդհանուր գծերով Երևանի նահանգապետ Նազարովի առաջարկած նախագծի էութիւնը: Այս նախագիծը քննութեան ենթարկեց գլխաւոր կառավարութեան անդամ իսկական գաղտնի խորհրդատու Կոցեբուն, որը չէր ընդունում քիւրդերի համար առանձին վարչութիւն հաստատելու օգտակարութիւնը: Կոցեբուն գտնում էր, որ քիւրդերի կեանքը կանոնաւորելու համար հարկաւոր չէ և անկարելի է ռուսաց հիմնական օրէնքները խեղաթիւրել, այն առարկութեամբ, թէ քիւրդերը սովորել և ընտելացել են «իրանց օրէնքների ձևերի» հետ: Քաղաքակրթված պետութիւնը չը պէտք է հաւասարվի կիսավայրենի ցեղերի կեանքի առանձնայատուկ մակերևոյթին: «Եթէ քիւրդերը, ասում է Կոցեբուն, չեն հասկանում մեր օրէնքների բարերար ազդեցութիւնը, այդ դեռ չէ նշանակում, որ նրանց պէտք է թողնել իրանց վատ, փչացած օրէնքներով, այլ ընդհակառակը նրանց պէտք է սովորեցնել այդ լաւին:

Կոցեբուի այդ կարծիքը հաւանութիւն և պաշտպանութիւն գտաւ պետական կայքերի համար սահմանված էկսպեդիցիայի կողմից, որը 1858 թւի յունվարի 7-ին այդ խնդրի մասին իր կարծիքը յայտնեց: Իշխան Բարեատինսկին այդ խնդրի վերջնական վճիռը մի առժամանակով յետաձգեց, մինչև որ Կոցեբուն իր պատճառաբանված կարծիքը ներկայացնէր: Բայց նա իր խոստումը չը կարողացաւ կատարել և այդ գործը ժամանակաւորապէս մնաց առկախ:

1864 թւի դեկտեմբերին քիւրդերի համար առանձին վարչութիւն հաստատելու հարցը նորից առաջ եկաւ, որովհետև այդ ժամանակները սկսվել էր Երևանեան նահանգում քրէական յանցանքները արդէն մեծ ծաւալ ստանալ: Այդ յանցանքները մեծ մասամբ կատարվում էին քիւրդերի մէջ: Դուցէ այդ հարցը դեռ երկար ժամանակ իր լուծումը չը ստանար, եթէ 1867 թիւը չը լինէր. այդ թւականին առաջնակարգ տեղ ստացաւ Երևանեան նահանգում «գիւղական կամ շինական վարչութեան պօլօժենիա» մտցնելու հարցը: Այդ պօլօժենիայում անմիջական ցուցմունքներ չը կային քոչւորներին կառավարելու մասին:

Այդ խնդրի առթիւ Կովկասի Փոխարքային զեկուցում արվեց: 1869 թւի յունվարի 1-ին Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը հրամայեց նշանակել պրիստաւներ՝ իբրև ժամանակաւոր միջոց:

Վերոյիշեալ պաշտօնեաների իրաւունքները և պարտաւորութիւնները բացատրված էին մի յատուկ հրահանգի մէջ, որը որոշում էր պրիստաւների դերը և նշանակութիւնը Երևանեան նահանգի քոչւոր համայնքների կեանքում: Այդ հրահանգում ասված է.

1) Երևանեան նահանգի քոչւոր հասարակութիւնների համար պրիստաւներ հաստատվում են Անդրկովկասում և Կովկասում ադմինիստրացիական հաստատութիւններ հիմնելու 1867 թւի դեկտեմբերի 9-ի Բարձրագոյն հրամանի II և V յօդուածների 3 կէտի ճշգրիտ իմաստով:

2) Մի պրիստաւին յանձնվում է Երևանի գաւառը, իսկ միւսին Էջմիածնի գաւառը: Այս վերջինը կառավարում է նոյնպէս Դարաքենդ-Փարչի հասարակութեանը: Իսկ Արագածի և Էշագ-Մէյդան կոչված եայլաղներին հսկելու համար Երևանի նահանգապետը ամառվայ 4 ամիսներին նշանակում է առանձին պաշտօնեայ:

3) Յարմարվելով քոչւորների կեանքի հետ, պրիստաւներն էլ պէտք է այնպէս ապրեն: Նրանք մշտական բնակութեան տեղ չը պէտք է ունենան, այլ լինեն այնտեղ, որտեղ գործ աւելի շատ կը լինի կամ թէ այն տեղերում, որտեղ կը նշանակէ նահանգապետը, իսկ քոչելու ժամանակ պրիստաւները պէտք է քոչւորներին ուղեկցեն և լինեն նրանց հետ:

4) Նահանգապետը իր իրաւունքով բաժանում է քոչւոր համայնքներին պրիստաւներին:

5) Պրիստաւը չը պէտք է թոյլ տայ, առանց յատուկ թոյլտուութեան, իր շրջանի քոչւորներին անցնել սահմանը:

6) Պրիստաւը պիտի ուշի ուշով հսկէ այն քոչւորներին, որոնք եկել և բնակվել են արտասահմանից իրանց ոստիկանական մասում:

7) Պրիստաւը յարմարվելով քոչւորների հայեացքներին, պիտի աշխատէ ամեն կերպ ամրապնդել նրանց մէջ նստակեաց և քաղաքացիական կեանքի առաւելութիւնները, նա պիտի բացատրէ գիւղական դատարանների, գիւղական վարչութեան իսկական իմաստը, թէ ինչ գործեր կարող են պատկանել հաշտարար դատարաններին և այլն, պիտի բացատրէ ընտրութիւնների նշանակութիւնը և համայնքի վերաբերմունքը կառավարութիւնից նշանակված տանուտէրերին և այլն:

8) Պրիստաւը պիտի ուսումնասիրէ քոչւորների տնտեսական դրութիւնը և եթէ գտնէ մի որ և է կարիք, պիտի նրանցից վերցնէ գրաւոր փաստաթղթեր և իր պատճառաբանված կարծիքով միջամտէ բարձր շրջանները: Եթէ հարկաւոր զգացվի տնտեսութեան մի որ և է մասը զարգացնել՝ պէտք է նոյնպէս միջամտէ գաւառապետի մօտ:

Ահա այն բոլորը, ինչ որ հարկաւոր էր համարվել, որպէսզի կարելի լինէր քոչւորներին ընտելացնել նստակեաց կեանքին տեղային բնակիչների և ադմինիստրացիային: Հրահանգից պարզ երևում է, որ պրիստաւների ձեռքին կենտրոնացած էր գլխաւորապէս ոստիկանական պարտաւորութիւնները, որոնք առաջ պատկանում են եղել քիւրդերի շէյխերին: Շէյխերին թողնված էր պատուաւոր ղեկավարների դեր, գլխաւորապէս դատաւորների դեր, որոնք կարող էին վճռել կամ քննել միայն քաղաքացիական գործեր, օրինակի համար—ժառանգութեան վերաբերեալ, առևանգութեան և դրանց նման գործեր: Ժամանակի ընթացքում, այսինքն օրէնսդրական ռէֆօրմները մտցնելուց յետոյ, այդ շէյխերի նշանակութիւնը թուլացաւ, իսկ ապագայում հաւասարեցրվեց զրօյի: Քիւրդերը բոլորովին հաւասարեցրված էին մնացած ազգաբնակութեան հետ, նրանց մէջ մտցրվեցին այնպիսի գիւղական համայնքի կանոններ, այնպիսի դատարաններ, ինչպիսին ունէր մնացած ազգաբնակութիւնը:

Մոսկվայի հոգևորականութեան մէջ ստորագրութիւն են հաւաքում, յայտնի գրող, Մոսկվայի քահանայ Գրիգորի Պետրովին այնտեղից աքսորելու, արգելելու նրան «Правда Божія» թերթը խմբագրել և սինօդին խնդրամատոյց լինել Պետրովին կարգալոյծ անելու համար: «Ж. и Св.»

Կառավարչական սենատը բացատրել է, որ բանուորական լիազօրների առաջիկայ ընտրութիւններին Պետական Դումայի համար մասնակցել կարող են միայն այն բանուորները, որոնք փոքր չեն 25 տարեկանից: «Р. В.»

Սիմֆերօպօլում Թուրքական համագումարը միաձայն որոշեց յարել սահմանադրական-ռամկավար կուսակցութեանը: «Р. В.»

Պետերբուրգի նահանգի զանազան տեղերից արդէն տեղեկութիւններ են ստացվել մեծ ապօրինութիւնների մասին, որ կատարել է ադմինիստրացիան փետրվարի 19-ին համայնքներից լիազօրներ ընտրելու ժամանակ: Մի քանի համայնքներից պատգամաւորութիւններ են եկել Պետերբուրգ տեղական ադմինիստրացիայի վրա գանգատ տալու, որոնք ամեն կերպ ճնշում էին գործ դնում համայնական ժողովների վրա՝ լիազօրների ընտրութեան ժամանակ:

Մինիստրական խորհրդի վերջին նիստում ի միջի այլոց մանաւոր քննութեան նիւթ դարձաւ սահմանադրական-ռամկավար կուսակցութեան հարցը: Անդամներից ոմանք անտեղի համարեցին բէյլէրեանների գործադրելը սահմանադիր - ռամկավար կուսակցութեան դէմ և որ առհասարակ անյարմար է տարբեր վերաբերմունք ցոյց տալ դէպի զանազան կուսակցութիւններ, որովհետև դրանով Դումայի վարկն է ընկնում: Նիստում յիրավին արոշվեց կոմս Վիտտէի Թշնամական վերաբերմունքը դէպի սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը: Կոմսը բացէ ի բաց ասաց, որ այդ կուսակցութիւնը խիստ դիմադրական է, ուստի անհրաժեշտ է նրա ազդեցութիւնը Դումայի կազմի վրա ապարդիւն դարձնել: Ծայրահեղ կուսակցութիւնները կոմսի կարծիքով, գործում են շատ Թոյլ, իսկ սահմանադիր-ռամկավարները ընդհակառակը գործում են մեծ եռանդով, և մի և նոյն ժամանակ ունեն այն առաւելութիւնը, որ կուսակցութեան կազմի մէջ մտնում են հասարակութեան մէջ մեծ հեղինակութիւն վայելող անձինք: Ի դէպ անդամներից մի քանիսը մատնացոյց էին անում, որ հէնց այդ հանգամանքից էլ անհրաժեշտ է օգտվել, որ այդ կուսակցութեան միջոցով առաւել հասարակութեան ինտելիգենտ տարրերին կարելի կը լինի գործելու հրաւիրել, որը լիովին համապատասխանում է կառավարութեան նպատակներին, այն պատճառով, որ այդ կուսակցութիւնը կանգնած է միապետական պլատֆորմի վրա և Դումայի մասնակցութեան պաշտպան է, և հետևապէս, եթէ նա նոյն իսկ ծայրահեղ կուսակցութիւն է, ուրեմն աւելի կարևոր է նրա մասնակցութիւնը, մանաւանդ որ նա իր գլխաւոր հիմունքներով համապատասխանում է կառավարական դասերի պահանջներին: Կոմս Վիտտէն հաստատ մնաց իր ասածի վրա, շեշտելով, որ Պետական Դումայի առաջի նստաշրջանը անհրաժեշտ է զերծ պահել ծայրահեղ կուսակցութիւնների չափազանց մեծ ազդեցութիւնից, որոնց Թւին և պատկանում են սահմանադրական-ռամկավարները: Այդպիսով չը նայած կոմսական օրգանի «Русское Государство»-ի հերքումներին, պրեմիէրի վերաբերմունքը դէպի սահմանադրական-ռամկավար կուսակցութիւնը լիակատար կերպով պարզվեց (Спб.)

Ուրեադնիկներին և գիւղական պահակներին խիստ հրաման է արձակված հսկելու, որպէս զի գիւղացիները չը կարդան «Молотъ», «Донская Рѣчь» և ուրիշ էժանագին հրատարակչական ընկերութիւնների գրքերը և բրօշիւրները, մի և նոյն ժամանակ անմիջապէս հաւաքեն այն բոլորը, ինչ որ կը գտնեն նրանց մօտ: «Р. В.»

Սենատոր Կուզմինսկու քննութեամբ հաստատվել է Օդեսսայի իշխանութեան անգործութիւնը քաղաքապետ Նէյդգարդի ղեկավարութեամբ, ուստի վերջինս արդէն դատի է ենթարկված: Գործի քննութիւնը տեղի կունենայ մարտի 20-ին: «Р. В.»

Մօսկվայի ժողովրդ. ազատութեան կուսակցութեան (սահմանադրական-ռամկավար) քաղաքային կօմիտեն, քննութեան նիւթ դարձնելով լէյտենանտ Շմիդի համար զինուորական դատարանի կայացրած դատավճիռը ու միանգամայն դատապարտելով մահվան դատավճիռը որպէս վայրենի ու բարբարոսական ակտ, որոշեց իր զայրոյթի բողոքն արտայայտել: «Р. В.»

Համաձայն լուսաւորութեան մինիստրութեան շրջաբերականի, ինչպէս հաղորդել էինք մեր ընթերցողներին, այն ուսումնարաններում, որտեղ մահմեդական դաւանութեան գիշերօթիկ աշակերտներ կամ աշակերտուհիներ կան, ուսումնարանական վարչութիւնները պարտական են յատուկ աղօթատուն շինել դրանց համար, որ նրանք իրանց ծէսի համեմատ իրանց աղօթքը (նամազը) կատարեն: Մարտի 3-ին, ուրբաթ, քաղաքիս ս. Նունէի օրիորդաց ուսումնարանում, այդպիսի մի աղօթատուն պատրաստել էր ուսումնարանի վարչութիւնը, ուստի և այդ օրը՝ ներկայութեամբ մահմեդական կրօնուսոյց մօլլայի և ուրիշների տեղի ունեցաւ նրա բացումը, որը ի միջի այլոց պատուեց իր ներկայութեամբ ուսումնարանի խորհրդի նախագահուհի կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկօվան: Ուսումնարանում ներկայումս մահմեդական աշակերտուհիների Թիւը ընդամենը հինգ է:

Պետական Խորհրդի ամենահին անդամներից մէկը, արդարադատութեան նախկին մինիստր կոմս Պալէն, ինչպէս հաղորդում է «Страна», այն կարծիքն է յայտնել, որ ներկայումս կատարվող անկարգութիւնները ճնշելու եղանակը, մահվան պատժի գործադրութեամբ, միանգամայն հակասում է հոկտեմբերի 17-ի մանիֆէստին և դատապարտվում է ամբողջ աշխարհի իրաւաբանների կողմից: Նոյն միտքն է յայտնել Պետական Խորհրդի մի ուրիշ անդամ էլ, ադմիրալ Չիխաչէվ:

Օրէօլ քաղաքից հաղորդում են «Наша Жизнь» Թերթին, որ բոլոր ադմինիստրատիվ կարգով աքսորվողները բաժանվում են առանձին տեսակների կրթութեան համեմատ և դրա համաձայն էլ աքսորվում են. գիւղացիները՝ Վօլօգդայի նահանգը, ուսուցիչները՝ Արխանգելսկի և Տօբօլսկի նահանգները, բժիշկները և ինժեները՝ Եակուտսկի շրջանը: Օրէօլ-Մօսկվա գծով գնում են գնացքները աքսորականներով լցված: Փետրվարի 23-ից վերջին գնացքով ուղարկվել են 42 հոգուց բաղկացած քաղաքական հանցաւորների մի խումբ, որոնց Թւում մի քանի զինուորներ: Աքսորվողները գունատ են ու յոգնած, շատերը նոյն իսկ հիւանդ են:

Առևտրական և արդիւնաբերութեան շրջաններից հարկաւոր ենք համարում հաղորդել մեր ընթերցողներին հետևեալ տեղեկութիւնները. 1) Պետական Խորհուրդը հաստատել է նոր բարձրացրած հարկը ծխախոտի և Թղթի վրա, և այդ մասին շուտով կը յայտարարվի ի գիտութիւն հասարակութեան: 2) Մարտի 1-ից Ֆինանսների մինիստրի կարգադրութեամբ պակասել է հարկը(ակցիզը) այն սպիրտի վրա, որը գործարաններում գործ է դնվում լաք և վէռնիշ (պօլիտուրա) պատրաստելու: 3) Ֆինանսների մինիստրութիւնը մի յատուկ մասնաժողով է ընտրել ֆինանսների ներկայացուցիչներից առևտրի, պետական կօնտրօլի և մի քանի բօրսային կօմիտեների անդամներից արհեստագործական (промыс.) հարկը աւելացնելու նախագիծ պատրաստելու համար: 4) Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրը ներկայացրել է մինիստրների խորհրդին՝ Բագուից Բաթում նաւթ փոխադրելու սակագինը (տարիֆը) իջեցնելու՝ ամեն մէկ պուդը 19 կօպէկի տեղ—12 կօպ. դարձնելով: Սրա պատճառը—մի կողմից Բագուի նաւթարդիւնաբերողների խղճուկ վիճակն է, որոնք անցեալ տարվայ աղէտալի անցքերից քանդվեցին, միւս կողմից այդ միջոցով Լօնդօնի առևտրի հրապարակում կիջնէ նաւթի գինը Ամերիկայի կերօսինի հետ մրցելով և վերջապէս՝ Բագուից—Բաթում նաւթանցք շինելու աշխատանքները բացվելով—նշանաւոր կերպով կը պակասեցնէ Անդրկովկասեան երկաթուղով կերօսին փոխադրելը:

Բուխարայից բրդի արտահանութիւնը Անգլիա և Ամերիկա անդադար աճելով—Մօսկվայի շրջանի բրդի առևտուր անողներին շատ է անհանգստացնում: Դրանցից շատերը՝ Բուխարայի բրդի արտասահման արտահանելու դէմ անհրաժեշտ են համարել դժուարացնող հարկ սահմանել և յոյս ունեն, որ այդ ձևով բուրդը նորից Նիժեգօրօդեան տօնավաճառ կը բերվի և մի և նոյն ժամանակ տափաստանի (степная) ռուսական բրդի գինը, որը ներկայումս շնորհիւ վերև յիշած հանգամանքի, շատ Թանգացել է իր գնի մէջ—կէժանանայ: Այդ մտքով բուրդ գնողները այս օրերս յայտարարութիւն են ներկայացրել Մօսկվայի բօրսային կօմիտէին:

«Русь»-ը հաղորդում է, որ Շմիդի քոյրը Բարձրագոյն անունով խնդիրք ներկայացրեց իր եղբօրը ներումն շնորհելու համար:

Երբ հրատարակվեց ներումն շնորհելու մասին հրովարտակ, արտասահմանից շատերը Ռուսաստան վերադարձան: Վերադարձողների Թւում գտնվում էին մի քանի յայտնի գրական հրէայ գործիչներ, որոնք իրաւունք չունեին հրէական բնակավայրերի սահմաններից դուրս ապրելու: Գրական ֆօնդի անունից Պ. Իս. Վէյնբերգ այն ժամանակ խնդրամատոյց եղաւ մինիստր-նախ. որպէս զի Թոյլատրվի մի քանի հրէա գրական գործիչներին ապրել Պետերբուրգում: Կոմս Վիտտէն Թոյլատրեց նրանց, որոնց մասին միջնորդել էր գրականական ֆօնդը, ժամանակաւորապէս ապրելու Պետերբուրգում: Մօտ ժամանակներս Պ. Իս. Վէյնբերգը տեղեկութիւն ստացաւ ներքին գործերի մինիստրութիւնից, որ նա հնարաւոր չէ համարում այլ ևս յիշեալ գործիչներին Թոյլատրել ապրելու հրէաների համար որոշված բնակավայրերի սահմաններից դուրս: «Рѣчь»

«Н. Вр.» հաղորդում է, որ բաշկիրների պատգամաւորութիւնը Վիտտէին խնդիրք է ներկայացրել, որով յայտնում է, որ բաշկիրներին Պետական Դումայում ներկայացուցիչ ունենալու իրաւունքից զրկելը, այն ժամանակ, երբ բուրիատները և կիրկիզները պէտք է ունենան, անարդարութիւն է:

«Страна» Թերթը հաղորդում է իբրև լուր, որ Ֆինլանդական սենատի մշակած նոր սէյմի կանոնադրութեան ծրագիրը Մեծ Իշխանութեան մինիստր ստատս-սեկրետարը ուղղակի ներկայացնելու է Բարձրագոյն հայեցողութեան առանց Պետական Խորհրդի և մինիստրների խորհրդի: Բարձրագոյն հաւանութիւն ստանալուց յետոյ, ծրագիրը կը յանձնվի Ֆինլանդական սենատին: Այդպիսով սէյմի նոր կանոնադրութեան հրատարակութեան խնդրում մինիստրների խորհուրդը ոչ մի մասնակցութիւն չէ ունենալու:

Վարշավայում, փետրվարի 23-ին, կէսօրվայ ժամի 12-ից լեհական սօցիալիստ կուսակցութեան կենտրօնական կօմիտեի պահանջով գործադուլ արեցին «Վօլիա» արուարձանում գտնվող բոլոր գործարանները, որպէս զի այդ միջոցով յարգեն զինուորների ձեռքով սպանված բանուոր Վացլավ Բրօկօվսկու յիշատակը: Նա 24 տարեկան էր, յեղափոխական շրջանային ռազմիկ կօմիտեի անդամ, բանուորական կօմիտեի պատգամաւոր, և «Վօլիա» արուարձանի բանուորական կազմակերպութեան ամենաեռանդուն գործիչ: Սպանվածի Թաղման հանդիսին մասնակցում էին մինչև 20 բանուորներ: Դագաղի յետևից գնում էին պատգամաւորութիւնները, պատրաստված էին մեծ քանակութեամբ ծաղիկներ, գերեզմանի վրա ճառ են խօսացել երեք հոգի: Տրամադրութիւնը քաղաքում վերին աստիճանի անհանգիստ էր: Հետևակ զօրքը, կօզակները և ոստիկանութիւնը կազմ ու պատրաստ էր: Թափորից առաջ խուզարկութիւններ եղան հանգուցեալի տան մօտիկ եղած բազմաթիւ տներում, և խուզարկեցին Թափորին մասնակցողներից շատերին: «Վօլիա» արուարձանում բոլոր տները և կրպակները փակ էին: Վօլսկի մանուածարանում, երբ սօցիալիստ-բանուորուհիները, Բրօկօվսկու յիշատակը յարգելու համար, դուրս բերին կարմիր դրօշակներ, բանուորուհիների միւս մասը, ազգային-ռամկավարները, ընդդիմութիւն ցոյց տուին: Ընդհարում եղաւ, որի ժամանակ վիրաւորվեցին մի քանի կանայք: Այդ օրվայ դէպքը վրդովմունք է առաջ բերել: «Р.»

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարտի 3-ին, երեկոյեան ժամը 8-ին 4 անյայտ չարագործներ զինված յարձակում գործեցին Ուգօլնի փողոցի վրա բնակվող տեղացի Խաչատուր Բաղդասարեան Նաւթիկեանի բնակարանի վրա: Չարագործները հագնված ունէին չերքեսկաներ, բակից բարձրացան պատշգամբ և յարձակվեցին Նաւթիկեանի աղախին Դարեկօյի վրա, բայց վերջինս աղմուկ բարձրացրեց, հաւաքվեցին դռնապանները և գօրօդօվոյները: Աւազակները 2 անգամ կրակելուց յետոյ, պարսպով կերպով անյայտացան:

Մարտի 3-ին, կէս օրից յետոյ ժամը 3-ին, Դվօրցովի փողոցի վրա յանկարծ ուժեղ տրաքոցի ձայն լսվեց: Ինչպէս յետոյ պարզվեց, ազնուականների հողային բանկում, ուր գտնվում է մօտօրը, պղինձը տրաքվել էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը եւ Շահը.—Լօնդօնում արաբերէն լոյս տեսնող «Էլ Խէլակէ» լրագրի 146-րդ համարում տպված է հետևեալը, որը ցոյց է տալիս, Թէ ինչ աստիճան յուսահատութեան մէջ ընկղմվեց Կարմիր Սուլթանը, երբ լսեց Մուզաֆֆէրէդդին Շահի՝ իր ժողովրդին տուած սահմանադրական իրաւունքների մասին: «Մեր ստացած մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, Ն. Մեծ. Սուլթանը՝ Ն. Մեծ. Շահի պարսիկ ժողովրդին սահմանադրական կառավարութիւն կազմելու իրաւունք տալու լուրը հէնց ստացաւ Թէ ոչ, Պարսկաստանի Կ. Պօլսում դեսպան Միրզա Արֆաուդ Դօվլէի միջոցով Ն. Մեծութիւն Շահին լուր ուղարկեց, որ դեռ ևս ժամանակը չէ հասել Ազգային Ժողով բաց անել Պարսկաստանում և այդ Ժողովը ոչ մի ընդհանուր օգուտ չէ կարող տալ, որովհետև ժողովուրդը չափազանց տգէտ է և անկարող օգտվելու այդ իրաւունքից:

Ն. Մեծութիւն Շահը սուլթանական Մեծութեան շնորհակալութիւն յայտնելուց յետոյ Նրա բարի ցանկութեան համար, պատասխանել է, որ Պարսկաստանում երեան եկած առաջադիմութիւնները այնպիսի ազնիւ անձերի ծնունդ են տուել, որ կարող են նոյնքան աշխատել, նոյնքան օգտակար լինել իրանց ազգին և հայրենիքին, որքան բացարձակ կառավարութեան պետական անձինքը: Եւ բացի այդ ազգը կը յարգէ միշտ այն իշխանին միայն, որը կը մարմնացնէ արդարութիւնը, ազատութիւնը, հաւասարութիւնը: Հետևաբար Ն. Մեծութիւն Շահը հաւատացած է, որ Պարսկաստանում Ազգային Ժողովը Թէ իրան՝ Շահին, և Թէ ժողովրդին բարիք միայն պիտի պարգևէ»:

Մակեդօնիայում.—Այս դժբաղդ երկիրը դեռ ևս շատ հեռու է խաղաղվելուց: Սուլթանի կառավարութիւնը շարունակում է վառել երկրի զանազան ազգաբնակութիւնների մէջ եղբայրասպան կռիւը: Պետութիւնների միջամտութիւնը մինչև այժմ ոչ մի շօշափելի արդիւնք չէ տուել: Յոյնը և բօլգարը դարձեալ շարունակում են միմեանց բնաջինջ անել: Այսպէս հարիւր հոգուց բաղկացած մի յունական չէտա վերջերս յարձակվել է բօլգարական Եզէբէց գիւղի վրա, և փորձել է նրան հրդեհել: Չետան մտնելով գիւղ, սկսել է նախ հրաձգութիւն առանց որոշ նպատակի, վախեցնելու համար գիւղի բնակիչներին: Յետոյ, քամու ուղղութեամբ, բռնկվող նիւթեր զետեղելով շատ տների տակ և նաւթ ածելով նրանց վրա, կրակեցին: Հրդեհը իսկոյն լափեց մի քանի ամբարներ և մի տուն, բայց, մինչդեռ բնակիչներից մի մասը աշխատում էր հանգցնել կրակը, միւս մասը, հրացաններով զինված՝ սկսեց ուժգին հրացանաձգութեամբ յետ մղել յոյն աւազակներին: Այս վերջիններից ընկան եօթ հոգի. ալբանացի մի աւազակ, Սէյֆէդդին, որ օգնում էր յոյներին, վիրաւորվեց: Մնացեալները փախան: Մի դժբաղդ բօլգարուհի ողջ-ողջ այրվեց հրդեհված տնում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի.—Ուղղում: Նախկին մինիստր Տէմիրեազէվը մտել է արտաքին առևտրի ռուս բանկի կազմի մէջ ոչ Թէ վերատեսչի պաշտօնով, այլ իբրև խորհրդի անդամ:

ՄՕՍԿՎԱ, 2 մարտի: Քաղաքապետը յայտարարում է, Թէ հիմք չը կայ հաւատալու կարգի խանգարման մասին չարամտութեամբ տարածված լուրերին: Մայրաքաղաքի ապահովութեան մասին հոգ է տարվում և կարգը խանգարող ամեն մի փորձ անմիջապէս կը ճնշվի վճռական միջոցներով:

ԲԷԼՕՍՏՕԿ, 2 մարտի: Նախընտրական բազմամարդ ժողովում աչքի էին ընկնում աւելի սահմանադիր ռամկավարական կուսակցութիւնները: Նախագահի առաջարկութիւնը՝ կազմել փորձնական ընտրութիւններ՝ մերժված է: Արգելված է հրէաներին հաւասար ձայն ունենալ:

ՊԵՐՄ, 2 մարտի: Քաղաքին կից մի գիւղում ընդհարում եղաւ կօզակների և բանուորների միջև. երկու բանուոր գնդակահար են արված. ընդհարման առիթ տուեց կանանց մէջ տեղի ունեցած վիճաբանութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Պաշտօնական: Մինիստրների Խորհուրդը իր փետրվարի 24-ի նիստում քննելով այն միջոցները, որոնցով կարելի է հրէական նոր ջարդերի առաջն առնել, յանձնարարեց ներքին գործերի մինիստրին՝ 1) Առանձին ուշադրութիւն դարձնել այն հանգամանքների վրա, որոնք Թերևս մի քանի տեղերում պատճառ դառնան հակահրէական անկարգութիւններ առաջացնելուն, որպէս զի ժամանակին այդպիսիների առաջն առնվի, 2) Յայտարարագրել ըստ պատկանելոյն գեներալ-նահանգապետներին և նահանգապետներին, որ նրանք անյապաղ միջոցներ ձեռք առնեն՝ արգելելու հրէաների վրա մասսայական բռնութիւններ գործադրել, ինչպէս և պարտաւոր են հեռացնել հասարակական ապահովութիւն և հանգստութիւն խանգարող բոլոր արգելքները և պաշտպանել մասնաւոր անձանց գոյքը և կեանքի անձեռնմխելիութիւնը, 3) Ցանկալի համարեց հեռացնել այն նոր, ճնշող բացառիկ կանոնները, որ բղխում անմիջապէս օրէնքից և, որ անտեղի անհրաժեշտութեամբ գործադրվում էին մինչև այժմ հրէաների վերաբերմամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Այսօր սկսվեց իր պարապմունքները Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը քննելու համար ամերիկական սինդիկատի ներկայացուցիչ, Լօյկ-դէ Լօբէլի առաջարկութիւնը,—Կօնսկ-Բէրինգ երկաթուղին կառուցանելու և Ալիասկա նեղուցը տունելով միացնելու մասին:

ԲԵՐԼԻՆ, 2 մարտի: «Կրէյց-Ցայտունգ»-ը ասում է, որ արմատականների և յեղափոխականների տաք ագիտացիայից յետոյ Ռուսաստանում հանգստութիւն տիրեց: Յեղափոխականների ցնծութիւնը կանխաժամ էր: Անկասկած է, որ կառավարութեան իսկական ցանկութիւնն էր իրականացնել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, բայց նա հանդիպեց զինված ապստամբութեան անմիտ արգելքին: Ընտրողական կռիւը տեղի ունի երեք խմբերի մէջ, երկու յեղափոխական կուսակցութիւնների՝ որպէս ծայրահեղ ձախակողմի և, միացեալ միապետականների միջև, որպէս ծայրահեղ աջակողմի, իսկ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի կուսակցութիւնը ընկած է երկուսի մէջտեղ, բայց յարվում է աւելի աջակողմեանին: Ուրեմն պէտք է ենթադրել, որ ռուս առաջին պարլամենտը պահպանողական կը լինի: Մի քանի տարուց յետոյ դէպի ձախ Թեքվելը անխուսափելի կը լինի արդէն:

ՊԱՐԻԶ, 2. մարտի: Ֆալիէրը դիպլօմատիական մարմնի պատւին ճաշ տուեց. ներկայ էին օտար պետութիւնների Պարիզի բոլոր ներկայացուցիչները:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 2 մարտի: Կօալիցիայի գլխաւոր կօմիտէն որոշեց յայտարարել ազգաբնակութեան, որ ներկայ կառավարութեան կապած դաշինքները երկրի համար անպարտադիր են: Կօմիտէն սպասում է, որ ունգարական կրէդիտային հաստատութիւնները կը հրաժարվեն մասնակցելու կառավարութեան ֆինանսական օպէրացիաներին, կօմիսարների գործունէութիւնը համարում է ապօրինի, բողոքում է կառավարչական վերջին հաղորդագրութեան դէմ, որը խախտում է սահմանադրութեան ընտրութիւնները յետաձգելով:

ԼՕՆԴՕՆ, 2 մարտի: (Րէյտէր): Համայնքների ժողովում զինուորական բիւջէտը քննելու ժամանակ Սէլլին պնդում է, Թէ պէտք է կրճատել զօրքի կազմը: Բալֆուրն ասում է, որ Անգլիան պահում է ներկայ զօրքի կազմը միայն Հնդկաստանի պատճառով: Կարող են առարկել, որ այն մեծ պետութիւնը, որի հետ կարող էր պատերազմ ծագել Հնդկաստանում, այժմ բռնված է ծանր խռովութիւններով և չէ կամենում մեզ հետ Թշնամանալ, սակայն մենք պէտք է քննենք Հնդկաստանի պաշտպանութեան հարցը ոչ այն հայեցակէտով, Թէ մեն ներկայումս լաւ յարաբերութիւնների մէջն ենք Ռուսաստանի հետ, որը, յոյս ունենք, աւելի կը զարգանայ ապագայ րէֆօրմների ազդեցութեան տակ, և Հնդկաստան արշաւելու միտքը կը վիժէ: Այդ գաղթավայրի պաշտպանութեան հարցը պէտք է քննվի բացարձակապէս երկու պետութիւնների սահմանների տեսակէտից և որ անհրաժեշտ է պատրաստ լինել ամեն պատահարների առաջն առնելու համար: Զինուորական մինիստր Գէլդէնը հաւանութիւն տալով Սէլլիի հայեցակէտին, մատնացոյց է անում, որ նախ և առաջ անհրաժեշտ է բազմակողմանի կերպով այդ հարցը պարզել: Անգլիայի զօրքի ծախքերի կրճատումը կարելի է երկրի զինուորական ոյժերի կազմակերպութիւնից յետոյ միայն: Մինիստր-Նախագահը յայտնում է, որ կառավարութիւնը ըստ պատկանելոյն ձգտում է ճշտապահութեան: Եթէ այժմ՝ նոյն իսկ մի քանի շաբաթից յետոյ կառավարութիւնը կատարում է ֆունկցիաները, առաջադրվում են նոր պահանջներ, նման Սէլլիի առաջարկածներին, բայց այդ ցոյց է տալիս դէպի կաբինէտը ունեցած հաւատարմութեան պակասութիւնը: Սէլլիի առաջարկութիւնը մերժվում է 296 ձայնով ընդդէմ 56-ի: Զօրքի Թւի կառավարչական նախագիծը ընդունված է:

ԼՕՆԴՕՆ, 5 մարտի: «Դէյլի Տելեգրաֆ»-ին հաղորդում են Տօկիօից, որ ծովային մինիստրութիւնը յայտարարում է Թէ՝ ծովային տեխնիկ Կիմուրան հնարել է անԹել հեռագրի սիստեմ:

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 3 մարտի: Զօրքերի առաքումը ծովով եռանդով առաջ է գնում: Պահեստի զօրքերի տեղափոխելը վերջացաւ: Քաղաքում հանգիստ է: Յեղափոխական շարժման մասնակցող անձանց վերաբերմամբ ձեռք են առնված կառավարչական միջոցներ: Մի քանիսը զինուորական դատի են ենթարկվելու: Նոյեմբերին արձակած խմիչքների արգելման հրամանը իր ոյժը պահպանում է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի: Պաշտօնական: Պետական Խորհուրդը մարտի 3-ին իր արտակարգ ընդհանուր ժողովում քննեց այն կանոնների նախագիծը որ կազմել էր մինիստրների խորհուրդը Պետական Խորհրդի և Դումայի ընտրութիւնների ազատութիւնը և կանոնաւորութիւնը պաշտպանելու համար: Պետական Խորհուրդը ընդունեց այդ նախագիծը մի քանի փոփոխութիւններով, որոնցից աւելի էական կայանում է նրանում, որ նախագծում որոշած պատիժները որ և է յանցաւոր գործողութեան համար—պակասեցրված են:

ՄԱՐԻՕՊՕԼ, 3 մարտի: Պետական Դումայի ընտրութիւնների համար գաւառում ընտրված են 24 ընտրողներ, որոնցից 6-ը շինական քահանաներ են:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայտարարվում է

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ, որ մարտի 5-ից, օրամէջ, առաւօտեան ժամը 8-ին, Թիֆլիսից Մանգլիս են գնում լինէյկաներ, Մանգլիսից էլ օրամէջ լինէյկաները գալիս են Թիֆլիս: Տոմսակները ծախվում են՝ Թիֆլիսից [illegible] գնացող կառքերի գրասենեակում (Պեսկօվսկի փողոց), Մանգլիսում՝ պօստի կայարանում: (կ.և.հ.) 1—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ե. Մ. ՋՈՒՇՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻՇՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Յ. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԶՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ԹՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Յ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տելեֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլեկտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՅԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՅԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրոսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից:
(Չ.ու.վ.) 41—100

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 08 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երեւանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից »	3 » 57 » »	—	—	3 ժ. 14 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երեւան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Չորեքշաբթի, մարտի 15-ին, երեկոյեան ժամի 9-ին, նշանակված է անդամների ընդհանուր ժողով՝ ընտրելու պակաս Թեկնածուներին, որպէս անդամներ առաջարկված անձանց քուէարկելու, նոյնպէս և քննելու և հաստատելու համար 1906 Թ. անելիք ծախսը և ուրիշ տնտեսական հարցեր: (10,15) 1—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մի երիտասարդ, որը անցեալ տարվայ սոսկալի ընդհարումներից զրկված է իր բոլոր կարողութիւնից, խնդրում է տալ իրան մի որ և է պաշտօն՝ այգեպանութեան, հողագործութեան, գինեգործութեան և կամ գրագրութեան, որով հնարաւորութիւն ունենայ Թէ կերակրել իր ընտանիքը և Թէ դարմանել իր հիւանդ կնոջն ու երեխաներին: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը: 1—2

Լոյս տեսաւ
«ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ»
Գինը 7 կոպ. ճանապարհածախսով 10 կոպ. կարելի է մարկայով: Դիմել հեղինակին Александрополь, Архимандриту Арсену Клитчяну և Թիֆլիսի գրավաճառներին: 1—3

Լոյս է տեսել և վաճառվում է
ՊՐՕՖ. Վ. ԶՕՄԲԱՐՏ
ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ
Հեղինակից Թոյլատրած Թարգմ. գերման. խմբագրութեամբ և յաւելուած-բառաթերթով
Արտաշէս Աբեղեան
151 երես, գինը 40 կոպ. գումարով գնողներին 20% զեղչ:
Նոյն հեղինակի՝ Տնտեսական և սօցիալ-քաղաքական հարցեր. գ. 10 կոպ.: Դիմել Թիֆլիսի Գուտտէնբէրգ և միւս հայ գրավաճառներին կամ Թարգմանչին այս հասցէով. Тифлисъ, армян. Семинарія Нерсисянъ, А. Абегянъ. (ու.ր.կ.) 2—3

Խնդրում եմ բարեգործներին օգնել ինձ մի չնչին գումարով, որով հնարաւորութիւն կը տան ինձ ուսումս շարունակելու: Ծնողներս շատ նեղ վիճակի մէջ են և չեն կարողանում վճարել, և վարչութիւնը սպառնում է ինձ արհակել: Նուէրները խնդրում եմ ուղղել «Մշակ»-ի խմբագրատուն:
2—2 Չքաւոր աշակերտ Ա. Գ.

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեհուտօվսկի և Պասկևիչեա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 48—100

Կիրակի, մարտի 12-ին, առաւօտեան ժամը 11-ին, Արտիստիկական ընկերութեան դահլիճում կայանալու է
Հայոց Դրամատիկական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
1) 1905/6 Թ. Թատրօնական տարեշրջանի հաշիւը:
2) Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը:
3) Վարչութեան հերթով դուրս գնացող իշխ. Մ. Թումանեանի, Ալ. Խատիսեանցի և Տիկ. Յովհաննիսեանի փոխարէն 3 անդամների և փոխ-անդամների ընտրութիւնը:
4) Վերստուգող յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի ընտրութիւնը:
5) Տիկ. Մակարեանի և պ. Ալ. Մէլիք-Սյվազեանցի մրցանակաբաշխութիւնների մասնաժողովի անդամների ընտրութիւնը: 1—2

Կենտրոնական գրավաճառանոցում
Թիֆլիսում վաճառվում են հետևեալ գրքերը.
Շահրիար, Արամի պսակը. գ. 6 կոպ:
Պրօֆ. Զօմբարտ, Տնտեսական և սօցիալ-քաղաքական հարցեր, գ. 10 կոպ.
» Բանուորական հարցը, գ. 40 կոպ.
Երիցեան Գ., Հայկական նշանագրեր հարթակարի համար. գ. 40 կ.
Եսայեան Յարութիւն, Մի և նոյն դագաղում, գ. 7 կ.
» Միք., Երազ, գ. 3 կ.
Բալդեան Գ., Սասունցի Դաւիթ Ա. և Բ. հ. գ. 80 կ., ա իւրաքանչիւր հատորի գ. 40 կ.
Իշխանեան, Տնտեսական զարգացման փազեր, գ. 15 կ.
Մելիք-Ղարագեօզեան, Մարդու կազմուածքը, գ. 60 կ.
Բէբէլ, Կնոջ ներկայ և ապագայ դրութիւնը, գ. 10 կ.
Վօդօվօզով, Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևելքում, գ. 10 կ.
Դիմել. Центральная книжная торговля. (Կ. 1—1

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԿԵԱՆՔ“
Քաղաքական, հասարակական և տնտեսական օրաթերթի, որ քաղաքական պայմանների շնորհիւ առ այժմ կը հրատարակվի իբրև
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.: Ամսական Թիֆլիսում 20 կոպ., դուրսը 30 կ., արտասահման 40 կ.: Հատով Թիֆլիսում 5 կ., դուրսը 7 կ.:
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Кянкъ», Чавчавадзская ул. № 4. արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Kiank», Tschawtchawadskaia № 4
2—3 (ու.կ.հ.) Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը
սրանով յայտարարում է, որ այս տարվայ մարտի 6-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կոյուղի շինելու Ֆէօդօսիևսկի փողոցում (Կոլիւչայա բալկա):
145 սաժ. բէտօնի խողովակի, հատված 0,33×0,22
25 » » « « 0,16×0,10
4 դիտողական հոր:
Գրաւոր յայտարարութիւնները, որոնց մէջ նշանակելու է վերև յիշված աշխատանքների առանձին-առանձին գները, պէտք է տրվեն փակ ծրարներով մինչև այս տարվայ մարտի 6-ը:
Սակարկել ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ Վարչութեան Շինարարական բաժանմունքում ամեն մի օր, ցերեկվայ ժամի 12—2. 94 3—3

Տպարան «ՀԷՐՄԷՍ» ընկ.

Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15